№ 260 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 260

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67

QUE ARMÉNIENNE
MISE St LAZARE

## ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
## ՄՇԱԿ
## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
## ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ

(45-ՐԴ ՏԱՐԻ)

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝**

| 12 և 11 ամիսը | 10 ամիսը | 9 ամիսը | 8 ամիսը | 7 և 6 ամիսը | Այնուհետեւ ամսական ՄԷԿ րուբլի։ |
|---|---|---|---|---|---|
| 10 րուբ. | 9 րուբ. | 8 րուբ. | 7 րուբ. | 6 րուբ. | |

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 րուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

**ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ**

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕՏՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
առ. (ա. օ.) 504. 100—95

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարան՝ի պրոֆ. Լէզների
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6. Սօլօլակ, Բեհբութովսկայա փող. սեփ. տուն, № 1, հրշեհաշէջների բնակարանների դիմացը, տելեֆոն 10—58.
առ. (չ. ու. կ.) 806. 50—8

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐՋՕՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը. Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։
առ. 753. 50—29

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7 ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. 779. 50—23

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)
Վերադառնալով հանքային Ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Բեհբութովսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) առ. 634. 100—31

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—78

## ՌՈՒՄԻՆԻԱՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այն օրից, երբ Բուլղարիան այնքան դաւաճանօրէն անցաւ Գերմանիայի և իր նախկին դահիճ Թիւրքիայի կողմը, երբ Յունաստանն էլ սկսեց երկդիմի դեր խաղալ, բովանդակ աշխարհի հայեացքը յառվեց Ռումինիայի վրա և անձկութեամբ սպասվում էր թէ սա ինչ դիրք կը բռնէ։

Իր աւանդութիւններով, իր ծագմամբ, իր կրօնով և սովորութիւններով, իր շահերով Ռումինիան պէտք է միանար Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ. իր ազգային իդէալների իրագործումը նա կարող էր գլուխ բերել պատերազմելով Աւստրիայի դէմ։ Եւ սակայն նա մինչև այսօր տատանվում է, սպասողական դիրք է բռնել և չէզոքութիւն է պահպանում։

Ոչ մի տարակոյս չը կայ, որ Ռումինիան էլ վերջ ի վերջոյ հանդէս է գալու և ստիպված է լինելու մասնակցել համաշխարհային պատերազմին, այլապէս նա ոչ մի իրաւունք չի ունենայ պատերազմից յետոյ հատուցում պահանջել։ Այս թէզիսը, թէ որևէ բան ստանալու համար պէտք է կանխապէս մասնակցած լինել պատերազմին և չէզոքութիւն չը պահպանել՝ համարվում է իբրև ակսիոմա, բայց նա ակսիոմա պէտք է համարվի միայն ինքնուրոյն, անկախ քաղաքական և պետական կեանք ունեցող երկիրների և ազգերի համար և ոչ այն ժողովուրդների կամ ազգերի համար, որոնք զրկված են այդ յատկութիւններից։ Ռումինիան մի անկախ պետութիւն է և ունի որոշ ազգային իդէալ, որի իրագործման համար նա, անկասկած, պէտք է մասնակցէ ներկայ պատերազմին, այլապէս ուրիշ անգամ նա այնպիսի յարմար առիթ չի ունենայ իրագործել իր ազգային իդէալը։

Ուրեմն ամբողջ խնդիրը նրա մէջ է, թէ պատերազմող որ կողմին յարելով Ռումինիան ամենից աւելի շանս ունի իրագործել իր ազգային իդէալը։

Տեսնենք որն է Ռումինիայի ազգային իդէալը։

Ռումին ժողովրդի թիւը 13.000,000 է, մի բաւական պատկառելի թիւ, որ իրաւունք է տալիս նրան որոշ դիրք գրաւել ազգերի մէջ։ Սակայն միայն 7.500,000 ը այդ թւից վայելում էին անկախ քաղաքական կեանքի և իր մայրենի երկրի մէջ իր կուլտուրան ազատօրէն զարգացնելու բարիքները։ Մնացած 5.500,000 ռումինները ապրում են հարևան պետութիւնների հողի վրա, ուրեմն հպատակ են այլ թագաւորութիւնների. 4.500,000 հոգի ապրում են Աւստրո-Ունգարիայում (Տրանսիլվանիա և Բուկովինա), և միայն 1.000,000 հոգի ապրում են Ռուսաստանում (Բեսսարաբիայում)։

Հետևաբար, Ռումինիայի ազգային իդէալն է, որ բոլոր 13.000,000 ռումինները միանան։ Սրանից բնականաբար հետևում է, որ ներկայումս Ռումինիայի ծաւալման և ազգային իդէալի իրագործման ամենամեծ խոչընդոտները Աւստրիան և Ունգարիան են, որովհետև այդտեղ է ապրում ռումինների ամենամեծ թիւը՝ 4 500,000 հոգի։ Միանալով Ռուսաստանին, Ֆրանսիային, Անգլիային և Սերբիային, Ռումինիան քառեակ համաձայնութեան յաղթութեան դէպքում կը ստանայ այդ 4.500.000 ռումինաբնակ Տրանսիլվանիան և Բուկովինան—մի ահագին երկիր, իսկ միանալով Գերմանիա—Աւստրիային, նա վերջիններիս յաղթութեան դէպքում՝ ամենաշատը կը ստանայ միայն Բեսսարաբիայի այն մասը, ուր ապրում են 1.000,000 ռումիններ։

Ուրեմն, Ռումինիայի ուղղակի շահը պահանջում է յարել քառեակ համաձայնութեան, որովհետև նրա ազգային իդէալի իրականացման ամենամեծ խոչընդոտը Աւստրո Ունգարիան է և ոչ Ռուսաստանը։

Սակայն, չը նայելով այդ ակնյայտնի իրողութեան, չը նայելով որ ռումին ժողովրդի բոլոր համակրութիւնները Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմն են, այնու ամենայնիւ նա դեռ չէզոք է մնում և ակտիվ քայլ չէ վստահանում անել։

Բայց երկար այդպէս մնալ նա չէ կարող. շուտով կը հասնէ այն ժամը, երբ նա այլ ևս յապաղել չէ կարող և յանուն այն մեծ նպատակի, որի համար մարդկութեան լաւագոյն մասը՝ անգլո-ֆրանկօ-ռուս տարրերը կռւում են, այն է տապալելու տևտոնեան և թիւրքական բռնակալութիւնը, մաղթենք և յուսանք, որ Ռումինիան միանայ քառեակ համաձայնութեան հետ և գրաւէ մի փառաւոր էջ համաշխարհային պատմութեան մէջ։

Հ. Ա.

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

## ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20—22 Նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Կովկասեան զօրաճակատ։ Վանի լճի հարաւային ափում մեր առաջապահ զօրամասերը, հետապնդելով Վարկունիսի շրջանից նահանջող թիւրքաց զօրքերին, առաջացան Բիթլիսի ուղղութեամբ։

Ամբողջ զօրաճակատի վրա մի քանի օր շարունակ ձիւնախառն մրրիկ է։ Լեռները ծածկվել են առատ ձիւնով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Կովկասեան զօրաճակատի վրա երէկ օրն անցաւ հանգիստ։

ԼՈՆԴՈՆ. — Պաշտօնական հաղորդագրութիւն Միջագետքում տեղի ունեցած ռազմական գործողութիւնների մասին։

Ինչպէս արդէն հաղորդվեց, գեներալ Տաունսէնդը Կտեզիֆոնի մօտ դիմադրեց թշնամուն, վանելով նրա բոլոր հակայարձակումները, մինչև որ վիրաւորներին և 1600 գերիներին հեռացրին, բայց մեր խոշոր կորուստների պատճառով և ի նկատի ունենալով թիւրքերին հասած օգնութիւնը՝ նահանջեց։ Այդ գործողութիւնների ժամանակ մենք ընդամենը կորուստ ունեցանք 4567 մարդ. բայց չը կայ ոչ մի տեղեկութիւն, թէ վիրաւորվել է քաղաքացիական պաշտօնեայ, ինչպէս այդ մասին յիշված է թիւրքական հաղորդագրութեան մէջ։

Լոյս նոյեմբերի 19-ի գիշերը գեներալ Տաունսէնդի վերջապահ գնդերը դիմադրեցին թշնամու գերազանց ուժերին։ Մեր կորուստներն են այդ կռւի մէջ 150 մարդ։ Մենք ստիպված էինք ձգել 2 գետային նաւ, որոնց վրայի թնդանօթները թշնամին փչացրել էր։

Գեներալ Տաունսէնդը գովասանքով է խօսում զօրքերի տոկունութեան մասին։ Գեներալը գտնվում է մի քանի մղոն հեռու Կուտէլէմարից, որի ուղղութեամբ եղաւ նահանջը։

Ի հերքումն գերմանական պաշտօնական գրութիւնների պէտք է յարակցել, որ բրիտանական զօրքերը երբէք կռւի ժամանակ իրանց հետ դրօշակներ չեն վերցնում։

## ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

21—22 նոյեմբերի

ԱԹԷՆՔ.—Կորֆուից հեռագրում են, որ իտալական զօրամասերը ափ են իջել Վալօնում։ Ուրիշ աւելի խոշոր իտալական գնդեր գտնվում են ճանապարհին։

Ֆրանսիացիք դեռ գրաւում են դիրքեր Կրիվօլակի, Բրաւնիկի եւ Վարդարի շըրջանում։

ՍՕԼՈՒՆ.—Երէկ բուլղարներն անհետեւանք ամրակոծեցին Կրիվօլակը։ Բուլղարները խրամատներ են փորել ֆրանսիական դիրքերից 150 մետր հեռաւորութեան վրա։

Մօնաստիրը դեռ սերբերի ձեռքումն է։ Բուլղարներին աջողվեց անցնել Ցըրնա գետը Նօվաչի մօտ։ Երէկ նրանք մօտեցան Կինալիին, որ գտնվում է յոյն-սերբիական սահմանի մօտ։

ՊԱՐԻԶ.—Սօլունից հաղորդում են, որ սերբ զօրքերը նոյեմբերի 19-ի երեկոյեան, համաձայն ստացված հրամանների, եւ ոչ թէ բուլղարների ճնշման տակ, թողին Մօնաստիրը։

ԱԹԷՆՔ.— Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ Սօլունի ֆրանսիական զինւորական շրջաններում այն տենդենցն է տիրում, թէ անհրաժեշտ է ստանալ գործելու ազատութիւն յունաց զինւորական իշխանութիւնների հետ բարեկամական համաձայնութիւն կապելով, որոնք եւ հակված են համաձայնութիւն կապել ֆրանսիացի ընկերների հետ։ Ֆրանսիական զինւորական շրջաններն աւելի շատ վնասակար են համարում հեռացնել բոլոր յունական զօրքերին Սօլունի շրջանից։

ՑԵՏԻՆԻԷ.—Մենք երէկ բոլոր կէտերում վանեցինք թշնամու ուժեղ յարձակումը Պլէվլի մօտ։

ՍՕԼՈՒՆ.—Սերբերը Մօնաստիրի մօտից նահանջում են դէպի Ալբանիա Րէսնէնի ճանապարհով։

Բուլղար դասալիք զինւորները, որոնց թիւը հետզհետէ աւելանում է, յայտնում են, որ եթէ պատերազմը շարունակվի Սերբիական Մակեդոնիան գրաւելուց յետոյ էլ, նա շատ անժողովրդական կը լինի Բուլղարիայում։

Սերբիական մի գումարտակ եկել է Գևգելի։

Սերբերը հեռացան Մօնաստիրից, գտնվելով չափազանց դժուարին դրութեան մէջ։ Նոյեմբերի 19-ից հեռագիրը խզվել է Մօնաստիրի եւ Սօլունի միջեւ։ Գերմանական եւ բուլղարական զօրքերը երէկ մտան Մօնաստիր եւ հասարակական շինութիւնների վրա բարձրացրին գերմանական եւ բուլղարական դրօշակներ։

Ֆրանս-անգլիական զօրաճակատի վրա դրութիւնը կայուն է։

Սերբ զօրքի մեծ մասն անցնում է ալբանական ձիւնապատ լեռներով. նրա մի մասը դիմում է դէպի Չեռնոգորիա, մի մասն էլ իջնում է ընդառաջ իտալական զօրքերին։

ԱԹԷՆՔ.— Ֆրանսիացիք ամրացել են Կրիվօլակի գագաթների վրա, իսկ բուլղարները ոչ հեռու նրանցից։

ՊԱՐԻԶ.— Նոյեմբերի 19-ին թշնամին թոյլ կերպով ամրակոծեց Կրիվօլակ կայարանը։

Նոյեմբ. 20-ին Ցրնայի զօրաճակատի վրա մեր արտիլերիան արգելք եղաւ թշնամու մեծաթիւ հետախոյզների աշխատանքներին։

Ներկայումս կռիւ է Ստրումիցայից դէպի արեւելք եւ բրիտանական ռազմաճակատի վրա։

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20—22 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական. Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Մեր շեշտակի կրակից Ստիրի գետի ձախ ափին, Չարտօրիյսկից վեր, հակառակորդը կրեց լուրջ կորուստներ և սարսափահար փախուստի դիմեց։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Մենք կանգնեցրինք գերմանացիների առաջանալու փորձը Դվինսկի շըրջանում։

Մնացած զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ — Պաշտօնական Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Արևմտեան զօրաճակատի վրա երէկ օրն անցաւ հանգիստ։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Մօնտէ-Նէրօ շրջանում ուժեղ ամրակոծութիւնից յետոյ թշնամու մեծաքանակ զօրամասերը ալիքանման արշաւով ներս խուժեցին մեր խրամատները։ Չը նայած մեր գիշերային սաստիկ կրակին, թշնամու զօրամասերին տեղ-տեղ աջողվեց մտնել մեր զօրագծերը, բայց յետոյ սկսված կատաղի ձեռնամարտի մէջ թշնամին ետ մղվեց եւ յամառ կռւից յետոյ փախուստի դիմեց, թողնելով կռւի դաշտում, բացի 500 դիակից, 131 գերի։

ՍՏՕԿՀՕԼՄ.—«Նարվիկ» շոգենաւը քարածուխ տանելիս կպել է Հիւսիսային ծովում ականի եւ ընկղմվել։ Խեղդվել են նաւապետը եւ 4 նաւաստի։

ՄԱՐՍԷՅԼ.—«Վիլ-դ'Ալժէր» շոգենաւը բերեց 11 նաւաստու՝ ջրասուզված բրիտանական շոգենաւի կազմից։ Իտալական «Բօլօնիա» շոգենաւ բերեց 16 նաւաստու՝ ջրասուզված իտալական շոգենաւի կազմից։

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Վատ եղանակն արգելք եղաւ ռազմի գործողութիւններին։ Զօրաճակատի զանազան կէտերում կռիւ էր ընդմիջումներով։ Արգօններում, Օտշիվօշէում եւ Էպարժում բաւականին ուժեղ ականային կռիւ էր։ Վէվրում մեր արտիլերիան ոչնչացրեց թշնամու մի խոշոր թնդանօթ։

ՀԱՎՐ. — Բելգիական հաղորդագրութիւն.

Վատ եղանակը այսօր էլ խանգարեց պատերազմական գործողութիւններին։ Մեր արտիլերիային աջողվեց մի քանի կէտում ոչնչացնել թշնամու պաշտպանողական աշխատանքները։

## ՅՕԳՈՒՏ ԹԻՒՐՔԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 նոյեմ.

ՓԱՐԻԶ.—Մի շարք ականաւոր քաղաքական, գրական և համալսարանական գործիչներ կոչով դիմում են արել ֆրանսիական ժողովրդի մեծահոգութեանը, խնդրելով օգնութիւն Կովկաս փախած թիւրքահայերին։

## ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

20—21 նոյեմբերի

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Նիւ-Եօրկից հաղորդում են, որ այնտեղից մեկնում են Միացեալ Պետութիւնների բոլոր քաղաքական եւ հասարակական շրջանների 200 ներկայացուցիչներ՝ Եւրոպայում հաշտութեան պրոպագանդա անելու նպատակով։

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնական։ Անգլիական զօրքը մինչեւ նոյեմբեր 27-ը ունեցել է կորուստներ. օֆիցերներ սպանված եւ մահացած վէրքերից 4620, զինւորներ 69,272. վիրաւոր օֆիցերներ 9754, զինւորներ 240,283. անհետ կորած օֆիցերներ 1583, զինւորներ 54,446. Միջերկրական ծովում սպանվել եւ մահացել են օֆիցերներ 1504, զինւորներ 21,531. վիրաւոր օֆիցերներ 2860, զինւորներ 70,148. անհետ կորած օֆիցերներ 350, զինւորներ 10,211։ Այլ պատերազմաբեմերում սպանվել եւ մահացել են վէրքերից օֆիցերներ 227, զինւորներ 2052. վիրաւոր օֆիցերներ 337, զինւորներ 5587. անհետ կորած օֆիցերներ 76, զինւորներ 3223. Նաւատորմի եւ ծովային հետեւակ զօրամասերի մէջ սպանված եւ վէրքերից մահացած օֆիցերներ 589, զինւորներ 9928. վիրաւոր օֆիցերներ 161, զինւորներ 1120. անհետ կորած օֆիցերներ 52, զինւորներ 310։ Կորուստների ընդհանուր թիւն է 510,230։

ՍԿԻՒՏԱՐԻ.—Նոյեմբերի 14-ին Սերբիայում պաշտօնավարող դեսպանները երկար դժուարին ճանապարհորդութիւնից յետոյ եկան չեռնոգորական Պոդգորիցա քաղաքը։ Ռուսաց դեսպան իշխան Տրուբեցկոյի հետ Պոդգորիցա են եկել միսիայի թարգման Մամալովն եւ Բելգրադի հիւպատոս Եմելիանովը, որին յանձնարարված է հոգալ Սերբիայից հեռացած եւ ներկայումս Չեռնոգորիայում գտնվող ռուսական սանիտարական խմբերի մասին։

**ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.** - Ռումինիան համաձայնել է ուղարկել Գերմանիա եւ Աւստրո-Ունգարիա կէս միլիոն կեր եւ հացահատիկ։

**ՍՏՕԿՀՕԼՄ.**—Ռուս-աւստրո-գերմանական Կարմիր Խաչի կօֆերենցիան ունէր բացառապէս խորհրդակցական բնոյթ։ Բոլոր ցանկութիւնները եւ առաջարկութիւնները հաստատուելու են համապատասխան կառավարութիւնները։ Ոչ մի կողմնակի հարց պատգամաւորները չը շօշափեցին։

**ՀՌՈՄ.**—Շարունակվում են վիճաբանութիւնները դեկլարացիայի առիթով։

Հանրապետական Կօլօեանին ապացուցեց, թէ Իտալիան անհրաժեշտօրէն պէտք է ընդլայնէ ռազմի գործողութիւնները եւ մասնակցի համաձայնութեան պետութիւնների բոլոր զօրաճակատների վրա, միայն եթէ կարելի է պէտք է՝ ապահովել Տրիենտի եւ Տրիեստի նուաճումը։

Սօնինօյի յայտարարութիւնները պատգամաւորները ընդունեցին մեծ համակրութեամբ. առանձնապէս լաւ տպաւորութիւն գործեց Լօնդօնում կայացած պայմանագրի ստորագրութիւնը եւ այն յայտարարութիւնը, թէ Իտալիան կօգնէ Սերբիային։

**ՊԱՐԻԶ.**—Պատգամաւորների պալատը 460 ձայնով, 1-ի դէմ, ընդունեց կենսական մթերքների գները կանօնաւորելու օրինագիծը։

**ԲՈՒԽԱՐԵՍՏ.**—Օպպօզիցիայի անդամներից մի քանիսը դիմեցին Բրատիանուին սենատում եւ խնդրեցին բացատրութիւններ տալ արտաքին քաղաքականութեան մասին։ Բրատիանուն հրաժարվեց։

**ՏՕԿԻՕ.**—Հասարակական կարծիքը հանգստացնելու համար արտաքին գործերի մինիստրի օգնականը մամուլի մէջ յայտնում է, որ կառավարութիւնը ստոյգ ապացոյցներ ունի, որ Հնդկաստանում ապստամբութեան ագիտացիան կատարել են Ճապօնիայից ուղարկված հնդիկները գերմանական գործակալների աջակցութեամբ։

**ԱԹԷՆՔ.**—Ֆլօրինայից յայտնում են, որ այնտեղ եկել են մեծ թւով սերբ փախստականներ, որոնց վիճակը շատ ողբալի է։ Նրանց հիւրընկալում են գիւղերում եւ վանքերում։

Ֆրանսիական կառավարութիւնը յանձն է առել պահել եւ դաստիարակել մինչեւ 10 տարեկան բոլոր սերբ երեխաներին պատերազմի ամբողջ ժամանակ։

**ՊԵՏՐՕԳՐԱԴ.**—Ներքին գործերի մինիստրի օգնական իշխան Վոլկոնսկիի նախագահութեամբ կայացաւ մասնաժողովի նիստը փախստականներին տեղաւորելու վերաբերեալ ընդհանուր հարցերի առիթով։ Քննվեց ապագայում փախստականներին իրանց մշտական բնակավայրերը վերադարձնելու կարգը։ Ընտրվեցին երեք ենթամասնաժողովներ հարցի մշակութեան համար։

**ՊԵՏՐՕԳՐԱԴ.**—Հրատարակվեց Բարձրագոյն անուանական հրաման, որով, Հիմնական Օրէնքների 87-րդ յօդուածի ոյժով, հրամայված է, զօրքի եւ նաւատորմի կազմը լրացնելու համար, 1916 թւին զինուորական ծառայութեան կոչել 1897 թւին ծնված երիտասարդներին։ Կամաւոր զինւորներ դառնալ ցանկողները կարող են յայտարարութիւններ ներկայացնել զինուորական իշխանութեանը պահանջվող վաւերաթղթերով հանդերձ։ Բոլոր երիտասարդները զէնքի են կանչվելու անկախ նրանց ընտանեկան դրութիւնից։

Գերագոյն Զօրահրամանատարի շտաբը հաղորդում է, որ Կօվնօյի բերդապետ գեներալ Գրիգօրիեվին Դվինսկի զինուորական-նահանգական դատարանը մեղաւոր ճանաչելով 142-րդ, 144-րդ, 145-րդ եւ 245-րդ յօդուածների մեղադրանքներով՝ դատապարտեց. զրկել գեներալին զինւորական կոչումից, աստիճաններից, շքանշաններից եւ բոլոր իրաւունքներից եւ, նկատի առնելով 1877—1878 թ. թ. պատերազմում ցոյց տուած աչքի ընկնող ծառայութիւնները, փոխանակ մահվան ենթարկելու, աքսորել նրան տաժանակիր աշխատանքների 15 տարով։ Այս դատավճիռը վաւերացրեց զօրաճակատի ընդհանուր հրամանատարը։

Բացվեց միապետականների համագումարը ստատս-սեկրէտար Շչէգլովիտովի նախագահութեամբ, որի օգնականներ ընտրվեցին սենատոր Րիմսկի-Կորսակովը եւ Պետ. Դումայում աջակողմեանների ֆրակցիայի նախագահ Լէվաշօվը։ Համագումարին ի թիւս այլոց մասնակցում են Պետրօգրադի եւ Մոսկվայի միտրոպօլիտները։ Ներկայ էին ընդամենը աւելի քան 200 պատգամաւոր։ Եկել են նոյնիսկ Սիբիրից։ Համագումարի ծրագրին է՝ ընդհանուր քաղաքական դրութիւնը, օգնութիւն պատերազմի զոհերին, կռիւ թանգութեան եւ գերմանական ազդեցութեան դէմ։ Համագումարը տեւելու է 3 օր։

1915 թ. նոյեմբ. 30-ին Լօնդօնում ստորագրված դեկլարացիան յայտնում է. «Ռուսաց, մեծ-բրիտանական, իտալական, ֆրանսիական եւ ճապօնական կառավարութիւնները փոխադարձաբար պարտաւորվում են չը կնքել առանձին հաշտութիւն ներկայ պատերազմի մէջ։ Վերոյիշեալ հինգ կառավարութիւնները համաձայնվում են, որ երբ քննվելիս լինեն հաշտութեան պայմանները, դաշնակիցներից ոչ մէկը չի ներկայացնի հաշտութեան պայմաններ առանց մնացած դաշնակիցներից ամեն մէկի նախնական համաձայնութեան։ Ի հաստատումն սրա՝ ստորեւ ստորագրեալներս ներկայացրինք այս դեկլարացիան եւ կնքեցինք պատշաճ կնիքներով։ Կոմս Բենկենդորֆ, սըր Է. Գրէյ, Պօլ Կամբօն, մարկիզ Իմպէրիալի, Ինույէ. Լօնդօն 17/30 նոյեմբ. 1915 թ.»։

**ՄՕՍԿՎԱ.**—Սկսվեցին «անգլիական օրերը»։ Տեղի ունեցան մի քանի դասախօսութիւններ Անգլիայի մասին։ Երեկոյեան քաղաքային դումայի մեծ դահլիճում կայացաւ Անգլիայի հետ մերձեցում կապելու ընկերութեան հրապարակային նիստը։ Դահլիճը լիքն էր հասարակութեամբ։ Ներկայ էին անգլիական հիւպատոսը, անգլիական եւ մեզ բարեկամ մեծ պետութիւնների գաղութների ներկայացուցիչները, աչքի ընկնող հասարակական եւ քաղաքական տեղացի գործիչներ։ Կարդացվեցին մի շարք զեկուցումներ, վերաբերեալ ռուս-անգլիական յարաբերութիւններին եւ ներկայ պատերազմում Անգլիայի ունեցած դերին։

**ՆԻՒ-ԵՕՐԿ.**—Միլիարդէր Ֆօրդի կազմած խաղաղութեան արշաւախումբը այսօր մեկնում է «Օսկար 2-րդ» շոգենաւով։ Ճանապարհորդների թիւն է 140 մարդ, որոնցից 54 լրագրական թղթակիցներ են, 3 կինեմատօգրաֆիական ֆիրմայի ներկայացուցիչներ եւ 20 ուսանողական ծառայող։ Խմբի կազմի մէջ չը կայ ոչ մի ականաւոր քաղաքական գործիչ։ Առ հասարակ այստեղ այդ խմբի վրա նայում են իբրեւ չափազանց թեթեւամիտ ձեռնարկութեան վրա։

**ՄՕՍԿՎԱ.**—Բացվեց քաղաքների միութեան զեմստվային եւ քաղաքային վիճակագրութեան տեխնիկների եւ բժիշկների համագումարը։

Մոսկվայի գիւղատնտեսական ինստիտուտը տօնեց իր գոյութեան 50-ամեակը։

**ՍՏՕԿՀՕԼՄ.**—Շվէդական Կարմիր Խաչը ստացաւ ռուսական Կարմիր Խաչից 2000 արկղ ընծաներ՝ Գերմանիայում գտնվող ռուս գերիների համար։

Կարմիր Խաչի կօնֆերենցիայի ռուս պատգամաւորներ Մարկօզովը եւ Արբուզօվը մեկնեցին Պետրօգրադ։

**ՀՌՈՄ.**—Պատգամաւորների պալատում վիճաբանութիւնները վերջացան կառավարութեանն ի նպաստ։ Յօգուտ կառավարութեան ձայն տուեն 408 հոգի ընդդէմ 48-ի։

Իտալական մամուլը բացարձակօրէն անվստահութիւն է յայտնում յունաց կառավարութեանը, մանաւանդ թագաւորին, եւ այն համոզմունքն է արտայայտում, որ եթէ անգամ այսօր քառեակ համաձայնութիւնը որեւէ աջողութիւն ձեռք բերէ, վաղը Յունաստանը դարձեալ կը դաւաճանէ։ «Մէսաջէրօ»ն զարմանում է, թէ ինչու քառեակ համաձայնութիւնը շարունակում է բանակցութիւններ վարել եւ չի աճապարում ձեռնարկել վճռական քայլերի։

**ԼՕՆԴՕՆ.**—Պաշտօնապէս ազդարարվում է. Ասկվիտը զինուորական մինիստր Կիտչինէրի եւ ծովային մինիստր Բալֆուրի, նաեւ զինւորական եւ ծովային խորհրդատուների մասնակցութեամբ խորհրդակցութիւն ունեցաւ Կալէում նոյեմբերի 21-ին Բրիանի եւ ֆրանսիական մինիստրներ Գալիէնիի եւ Լակազի հետ։ Խորհրդակցութիւնից յետոյ բրիտանական մինիստրները վերադարձան Անգլիա։

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

◆ Բեռլինից հաղորդում են, որ սօցիալ-դեմօկրատները, բացի հաշտութիւնից, պահանջում են աւելացնել զինւորների ռոճիկները 50°/o-ով։

◆ Շիրազում կալանաւորված անգլիական հիւպատոսին եւ բանկի տնօրէնին տարել են գերմանացիների բարեկամ Տանգիստանի ցեղի մօտ։

◆ Աւստրո-գերմանական զօրքերի մի մասը թողնում է Սերբիան եւ դիմում է դէպի Րուշչուկ՝ Բօլգարիային պաշտպանելու համար։

◆ Գերինների ասելով՝ Լվօվում սպասվում է Ֆրանց-Յօսէֆ կայսրը։

◆ «Daily Graphic»-ի կարծիքով, ռուս զօրքերի եռանդուն գործելակերպը Կովկասում եւ անգլիացիներինը Միջագետքում՝ կարող է դրական լինել այն բանի, որ մահմեդական արեւելքում հրդեհը կը հանգչի ամենավճռական կերպով։ Շուտով ռուսները եւ անգլիացիք ձեռք կը մեկնեն իրար բազմատանջ Հայաստանում, զրկելով դրանով գերմանացիներին եւ թիւրքերին դէպի Պարսկաստան նոր ռազմամթերք ուղարկելու հնարաւորութիւնից։

◆ Գերմանիան գնել է Ռումինիայում 50,000 վագօն հացահատիկ, որ պէտք է տեղ հասցնել երեք ամսում։ Ամեն օր Գերմանիան ռումինիական սահմանակից կայարաններն է ուղարկում 380 վագօն։

◆ Գերմանացիք վերջերս նորից խիստ գործողութիւններ են ձեռնարկել Րիգայի շրջանում, բայց ռուս մասնագէտ զինուորականների կարծիքով, մեր դրութիւնը այնտեղ կայուն է։

◆ «День»-ը լսել է, որ դեկտ. 6-ին Պետրօգրադ է գալու ռումինական զինուորական պատգամաւորութիւն։

◆ Օրշօվում համաձայնութիւն է կայացել, որ Գերմանիան, Թիւրքիան, Աւստրիան ու Բօլգարիան անջատ հաշտութիւն չեն կնքի զատ-զատ։ Բացի այդ, վճռվել է ուղարկել ամենուրեք, ուր կռւում են գերմանացիք, թիւրքերի։ Այդ բանը յուզմունք է առաջ բերել Թիւրքիայում։ Մզկիթներում տեղի են ունենում բողոքի ժողովներ։ Ընտրվել է մի պատգամաւորութիւն, որ գահաժառանգին ներկայանալով նախազգուշացնելու է, թէ յեղափոխութիւն կը լինի, եթէ աւստրո-գերմանական մտադրութիւնները իրականանան։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ հաստատվել է առանձին ֆօնդ պատերազմից վնասվածներին վնասները հատուցանելու համար։

◆ Հաղորդում են, որ իտալական զօրքերը գրաւել են Օսլավիան։

◆ Սպասվում է, որ Վիլհէլմ կայսրը տեսակցէ յունաց թագաւորի հետ։

◆ «Դէյլի Նիւսի» ասելով, Ֆրանց-Յօսէֆը կամեցել է բանակցութիւններ սկսել Ռուսաստանի հետ անջատ հաշտութեան մասին։ Այդ բանը իմանալով՝ Վիլհէլմը իսկոյն եկել է Վիեննա եւ համոզել հրաժարվել այդպիսի մտադրութիւնից։

◆ «Բ. Վ.»-ն հաղորդում է, որ ֆրանսիական նախկին մինիստր Դումէրգը Պետրօգրադում լրագրի աշխատակցին յայտնել է, որ նա եկել է շատ լուրջ յանձնարարութեամբ՝ աւելի սերտ հիմունքների վրա դնելու Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի միջեւ գործակցութիւնը ընդհանուր թշնամու դէմ։

◆ Ֆրանսիական հասարակական կարծիքը մեծ գոհունակութեամբ ընդունեց այն վճիռը, որի համաձայն Ժօֆֆրը նշանակվել է եւրօպական պատերազմաբեմում գործող բոլոր ֆրանսիական զօրքերի գլխաւոր հրամանատար։

◆ Թէեւ «Н. В.»-ին եւ Սօֆիայից հեռագրում են, որ Յունաստանը պատրաստակամութիւն յայտնեց ընդառաջնալ դաշնակիցների պահանջին, բայց յունաց պաշտօնական օրգանները միանգամից սկսել են խիստ յարձակում քառեակ համաձայնութեան պետութիւնների դէմ։ Ի զուր չէ, որ ֆրանսիական՝ աւելի [illegible]՝ մամուլը միանգամայն հաւատը կորցրել է Յունաստանից։

◆ Բօլգարական եւ աւստրո-գերմանական զօրքերը Մօնաստիրը վերցնելիս կրել են շատ մեծ կորուստներ։ Գերմանական զօրքերը մտնում են Բօլգարիայի խորքը։ Նրանց զօրամասերը Չէրնօգօրիայում մօտենում են Պլեվլէին։ Սերբ զօրքերի մի մասը արդէն գտնվում է յունական հողի վրա։ Թէ ինչ է լինելու վերջինի վիճակը, այդ ցոյց կը տան մօտակայ օրերը։

◆ «Բ. Վ.»-ն ասում է, որ Վիլհէլմ կայսրի եւ Ֆրանց-Յօսէֆի տեսակցութիւնը տեղի է ունենալու Սերբիան Աւստրիայի եւ Բօլգարիայի միջեւ բաժանելու հարցի առիթով։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՐԱԳԵԴԻԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

(Յօդուած «Новое Время»-ից)

—

Այն չափով, քանի ծաւալվում է պատերազմը, առանձին պետութիւնները հետզհետէ կտրվում են մէկը միւսից։ Թիւրքիայից, օրինակ, առաջ կարելի էր որեւէ տեղեկութիւն ստանալ Բօլգարիայի վրայով, այժմ պէտք է բաւականանալ այն հատուածական ակնարկներով, որ գալիս են Սօֆիայի, Վիեննայի, Բեռլինի եւ Շվեդիայի վրայով։ Չը նայած դրան, այնու ամենայնիւ վստահութեամբ կարելի է ասել, որ ներկայումս թիւրքական առաւել թշւառ մի շրջանում կատարվում է ողբերգութիւն, որ գերազանցում է ամեն ինչ, անգամ ամենայոռետես տրամադրված երեւակայութիւնը։ Մենք ի նկատի ունենք Փոքր-Ասիայի այն շրջանը, որը բնակեցված է հայերով։

Օրերս Պետրօգրադում տեղեկութիւններ են ստացվել այն հալածանքների մասին, որոնց այս ամառվայ ընթացքում ենթարկվել են հայերը։ Այս տեղեկութիւնների կուռթիւնը, իր գլխաւոր գծերով, յանգում է հետեւեալին։ Ապրիլի սկզբում Կ. Պօլսից հրաման էր ստացվել զինաթափ անել հայերին. այս միջոցը, ինչպէս յայտնի է, թիւրքերը սիստեմատիքաբար գործադրեցին իր ժամանակին Մակեդօնիայում. Նրա համար, որպէս զի թեթեւացվի մուսուլմանների գործը ընդդէմ քրիստոնեաների, վերջիններից ամենից առաջ վերցնում էին նրանց մօտ եղած զէնքերը։ Հէնց զէնքեր հաւաքելու գործը միայն առաջ էր տարվում ամեն տեսակ կեղքեններով, որովհետեւ հայերը, ամեն կողմից շրջապատված թշնամի քիւրդերով, այնքան հեշտ չէին բաժանվում այդ զէնքերից, որը համարւում էր նրանց ինքնապաշտպանութեան միակ միջոցը։ Իսկ որովհետեւ զինաթափութեան գործը յանձնված էր թիւրքական ըստ ամենայնի կասկածելի տարրերին, ուստի սպասելի էր, որ գործը վերածվէր շանտաժների, կողոպուտների եւ արիւնահեղ ընդհարումների ու մասսայական բռնաբարութեան։ Սրանից յետոյ, մի քանի շաբաթ անց, եկաւ երկրորդ հրամանը՝ գաղթեցնել հայերին այն վայրերից, որոնց սպառնալ կարող է ռուս զօրքը, որովհետեւ քրիստոնէական ազգաբնակութիւնը չէ կարող չը համակրել ուղղափառ կողմից եկող զօրքերին։ Գաղթեցումը կատարվեց այնպիսի ձեւով, որ հայերին սկզբում խուզարկում էին, իսկ այնուհետեւ կազմում էին հինգ-տասը մարդկանցից խմբեր։ Եւ գաղթեցնում էին միայն այն անձանց, որոնք պարզապէս կարող էին երկար ճանապարհորդութիւն կատարել ոտքով։ Ծերերին թողնում էին իրանց տեղերում, իսկ երեխաներին եւ աղջիկներին, բաւէ բռւն մարդով, բաժանում էին թիւրք սիրողների միջեւ։

Մի ականատեսի ասելով, իւրաքանչիւր գաւառական վարչութեան մէջ կազմվել է ստրկատիրական շուկայի նման մի բան. մուսուլմանները գալիս եւ վերցնում էին ում իրանց դուր էր գալիս։ Այս տեսարանը այնքան սովորական է եղել, որ երկու գթութեան քոյր (գերմանական հպատակ) իրանց պարտքն են համարել մեկնել Կ. Պօլիս եւ իրանց տեսած սարսափների մասին պատմել մի քանի չէզոք դեսպանատներին։ Ինչ վերաբերում է աքսորականների կարաւաններին, նրանք առաջ էին տարվում սարսափելի պայմաններում, առանց սննդի եւ առանց բժշկական օգնութեան։ Հասկանալի է, որ նրանք ճանապարհին կը կոտորվէին հազարներով։ Մի վստահելի ականատես (մուսուլման) պատմում է, որ ինքը Մալաթիայից գնում էր Սըվազ, եւ որ իր ճանապարհի երկարութեամբ, որ տեւել է տասը ժամ, ինքը տեսել է ճանապարհի երկու կողմն էլ ընկած հայերի եւ հայուհիների դիակներ։

Լաւագոյն ապացոյց այն սարսափելի դրութեան, որի մէջ գտնվում է հայ ազգաբնակութիւնը, կարող է ծառայել այն փաստը, որ ամեն կողմից խնդիրներ են ստացվում իսլամութիւն ընդունելու մասին։ Սկզբում այս խնդիրները օսմանեան կառավարութիւնը ընդունում էր չափազանց սիրով, որովհետեւ հաւատափոխութիւնը այն երկիրներում անխուսափելիօրէն առաջացնելու էր ապազգայնացում։ Բայց այժմ թիւրքերը սկսել են խոչընդոտ յարուցել եւ այդ բանի դէմ, որը, թւում էր, մի ցանկալի միջոց պէտք է լինէր նրանց համար կոտորածներից ետ կանգնելու։ Օրինակ, Սըվազում դրվել է հետեւեալ պայմանը նրանց համար, ով որ կը ցանկար ընդունել մահմեդական հաւատ. կառավարութեանը տալ 12 տարեկանից փոքր երեխաներին այն պայմանով, որ նրանք պէտք է տեղաւորվեն կամ որբանոցներում կամ թիւրքական այնպիսի ընտանիքներում, որոնք կը ցանկանան իրանց խնամքի տակ առնել «նորադարձներին»։ Իսկ հասակաւոր հայերին՝ գաղթել մշտական բնակութեան վայրից եւ գնալ այնպիսի տեղեր, որ ցոյց կը տայ կառավարութիւնը։ Խարբերդում գործը դրված էր մի փոքր այլ կերպ, սակայն դարձեալ ոչ առանց չարագէտ խորամանկութեան. մուսուլմանութեան գիրկը դառնալը ընդունվում էր միայն տղամարդկանցից. իսկ կանայք նոր հաւատ ընդունել կարող էին միայն այն դէպքում, եթէ գտնվէր մի մուսուլման, որը համաձայնէր նրանց վերցնել իր հարեմը։

Այսպիսի պայմաններում հազիւ թէ կարիք զգացվի խօսել նաեւ անհատական ոտնձգութիւնների մասին, որ եղել են հայ առանձին ականաւոր գործիչների վերաբերմամբ։ Հալարապետեան եպիսկոպոսը կախվել է առանց օրինական դատավճռի։ Խարբերդի առաջնորդ Տէր-Խորէնեան եպիսկոպոսը սպանվել է քաղաքից ոչ հեռու այն բանից յետոյ, երբ նա, կառավարութեան հրամանով, կամովին աքսոր էր գնում։ Սպանված եւ տանջված քահանաների քանակի մասին մօտաւոր հաշիւ անգամ դժուար է կազմել։ Եւ ի զուր չէ, որ Կ. Պօլսի շուկան ներկայումս լցված է պաշտամունքի եւ այլ առարկաներով, որոնք մեծ քանակութեամբ այնտեղ տարված են հայկական աւերված եկեղեցիներից։

Հայ ազգի բնաջնջման սիստեմատիկ ծրագիրը այսպիսով առաջ է տարվում հետեւողականօրէն եւ անօրինակ ցինիզմով։ Ակներեւ է, որ Վիլհէլմ կայսրի «կուլտուրական» զօրքերի՝ թիւրքերին ցոյց տուած բարոյական աջակցութիւնը [!] ամբարտաւանացրել է այն դահիճներին, որոնք Կ. Պօլսում կոչվում են մինիստր ներքին գործերի, մինիստր արդարադատութեան եւ այլն։ Հայերին այժմ մորթում են ոչ թէ զգուշութեամբ, այլ ինչ-որ մի անզուսպ սանձարձակութեամբ—մեզ ամեն ինչ թոյլատրելի է։ Կ. Պօլսի մեր դեսպանատան նախկին առաջին թարգման Ա. Ն. Մանդելշտամ իր բրօշիւրի մէջ—«Երիտասարդ-թիւրքերի պետութիւն»—պատմում է, թէ ինչպէս ինքը խօսակցութիւն է ունեցել Թալէաթ-բէյի հետ մի հայի մասին, որին մեր ձեռքը յանձնելը, որպէս ռուսահպատակի, պահանջում էր մեր միսիան։ Թալէաթը թոյլ է տուել իրան ասելու հետեւեալ ֆրազը, որը նա, հաւանօրէն, ընդունել է սրամիտ կալամբուրի տեղ. «Restituer—non, tuer—oui!» (վերադարձնել—ոչ, սպանել—այո)։ Այժմ այսպիսի ոգով հայկական վատ անեկդօտներ հաղորդում են միանգամայն հեղինակաւոր աղբիւրից, որ երբ ամերիկական դեսպանը խօսում էր նոյն Թալէաթ-բէյի հետ, պաշտպանելով Միացեալ Պետութիւնների միջամտութիւնը յօգուտ հայերի, եւ հարցրել է Թալէաթին, ի միջի այլոց, թէ իսկապէս ինչ յատուկ պատճառով թիւրքերը այդպէս հալածում են հայերին, երիտասարդ-թիւրքերի սրիկան ժպիտով պատասխանել է. «Parce que cela nous amuse»—(որովհետեւ այդ մեզ զուարճացնում է)։ Իսկ մեծ վեզիր Սայիդ-Հալիմ փաշայի մասին պատմում են հետեւեալ մանրամասն, որ հաղորդել է հայ յայտնի պատգամաւոր Զօհրապի կինը։ Սրանից 4 ամիս առաջ այս հայ՝ ըստ ամենայնի ականաւոր գործիչը արտաքսվում է Ասիա. կինը չափազանց անհանգստանալով իր ամուսնու ապագայի մասին՝ գրեթէ ամեն օր թելեֆօնով խօսում էր մեծ վեզիրի հետ, հարցնելով թէ մի նորութիւն չը կա՞յ։ Վերջապէս մի անգամ նա ստանում է այսպիսի պատասխան. «Այո, կան բոլորովին թարմ նորութիւններ. երեկ ձեր ամուսնուն կախեցին»։ Այս ասվել է, ինչպէս պատմում է անբաղդ այրին, ամենաուրախ եւ անհոգ եղանակով։

Արդէն բազմիցս ասել ենք, որ հայկական ողբերգութիւնը, ողբերգութիւնը մի ամբողջ ժողովրդի բնաջնջման, հանդիսանում է ամենասարսափելի մեղադրանքներից մէկը ընդդէմ գերմանիզմի։

Մի բան միայն ոչ մի կերպ չի կարելի հասկանալ. այն բարոյական համերաշխութիւնը, որը, անկասկած, իր վրա է վերցրել գերմանական կառավարութիւնը, թոյլատրելով թիւրքերին վերջ տալ հայերի դժուարին հարցին՝ հայ ամբողջ ազգի հասարակ ոչնչացումով։ Որքան էլ մենք խորը թափանցէինք օսմանեան ոչ այնքան էլ գեղեցիկ պատմութեան մէջ, մենք ոչինչ չենք գտնի, անգամ մօտաւորապէս նման այն «օսմանիզացիայի», որ այժմ կատարվում է Հայաստանում եւ Կիլիկիայում Բեռլինի զինուորական ճեմարանի աշակերտ Էնվէր-բէյի ձեռքով։ Միայն չին-մօնղօլական յարաբերութիւնների մէջ կան մի քանի ցուցմունքներ, որ չինական մանդարինների հրամանով մորթվել է մի ամբողջ ժողովուրդ։ Ահա թէ որպիսի ընկերակցութեան մէջ է գտնվում ներկայումս Վիլհէլմ կայսրը։

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

— o —

### Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Կարսից, Մաղաթ Թաղվէրանեանից՝ հանգուցեալ օր. Հ. Տէր-Խաչատրեանի յիշատակին 5 ր.։

### ՎԱՆԻ ՈՐԲԵՐԸ

—

Վանից ստացված մի նամակից քաղում ենք հետեւեալը.

«Վանի շրջանում եւ Վան քաղաքում հաւաքված են այժմ մեծ թւով որբեր, որոնց ծնողները կոտորվել են։ Երեխաները հազիւ են ոտքի կանգնում. նրանցից շատերը այնքան նիհար են, որ կմախքների տպաւորութիւն են թողնում։ Մեծամասնութիւնը բոլորովին մերկ է։ Անօթեւաններին պատսպարելու տեղ չը կայ ոչ մի տեղ, որովհետեւ քաղաքում ամեն ինչ կողոպտված է եւ հրդեհված։ Երեխաներին հագցնելու համար գործ են ածում տեղական քաթանը, որը շատ ցանցառ է եւ չի տաքացնում։ Երեխաներից մի քանիսը տեղաւորված են 11-րդ գնդի շարժական հիւանդանոցում, բայց այնտեղ էլ շատ քիչ տեղ կայ։ Մերկ երեխաները պառկում են զինուորների շինէլների տակ, որովհետեւ վերմակներ չը կան։

«Քաղաքում չը կայ ոչ մի մասնաւոր բժիշկ ազգաբնակութեան կարիքների համար։

«Այժմ Վանում հաւաքված է 50 որբ. ամեն օր նոր որբեր են գտնվում քաղաքի շրջակայքում, բայց շատ հազիւ է պատահում փրկել նրանց։ Անբաղդ երեխաները յարձակվում են հացի վրա [illegible], որ նրանց դժուար է ետ կանգնեցնել դրանից, եւ դրա շնորհիւ նորից հիւանդանում են։ Անհրաժեշտ է օգնութիւն՝ առանձնապէս բումազէյ կամ ուրիշ տաք կտորներով՝ անբաղդ երեխաներին հագցնելու համար»։

### ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Նա էլ ընկաւ...

Այլեւս չը կայ Կարապետ եպիսկոպոսը, հայ ազգի գիտնականը, հայոց եկեղեցու ամենէն սրտացաւ ու հարազատ զաւակը, մեր հոգեւորականութեան պարծանքը, մի շարք սերունդների յարգված ու սիրված ուսուցիչը։

Մեծ է կորուստը... Կարապետները հեշտ չեն ծնվում. Նրանք հազուագիւտ երեւոյթներ են մեր կեանքում...

Այսօր՝ այս արհաւիրքի օրերին, երբ այնքան պէտք ունենք լուրջ, գիտական պատրաստութեամբ օժտված գործիչների, անձնուրաց աշխատաւորների, հոգի եւ սիրտ տուող քաջարի հովիւների, այսօր մեր նօսր շարքերից պակասում է նա՝ Կարապետ սրբազանը։

Կարապետ սրբազա՜ն. Թովիչ անուն... Այն ո՞ր ճեմարանականն է, որ լսի Թանգագին «հայր-սուրբի» անժամանակ մահվան բօթը եւ չը սարսափի. կարելի՞ է, միթէ, չը յիշել նրան ճեմարանում, ուր երկո՜ւ տարիներ հնչեցրել է նա իր անկեղծ խօսքը, իր յորդորները, հայաշունչ քարոզները՝ աշակերտների ականջին։

Գալիս է երեւակայութեանս առաջ նա իր արտաքին ու ներքին վեհութեամբ... Ոչ, չէ կարելի մոռանալ անխոնջ ու բարի ուսուցչին։

Յիշում եմ այն օրը, երբ հանգուցեալն ընդհատեց իր դասախօսութիւնները. վեհափառի հրամանով նա կոչվում էր Երեւանի առաջնորդութեան, ուր սպասում էր նրան անձնուրաց եւ ազգանուէր մի գործունէութիւն... Վերջին դասն էր. այդ ժամին նա արցունքով բաժանվեց սիրելի աշակերտներից՝ յորդորելով նրանց միշտ լինել աշխատասէր եւ պատրաստված ոյժերով նուիրվել տարաբաղդ ազգի խոպան անդաստանի մշակոյթին....

Թարմ շիրմիդ առաջ՝ աշակերտական խորին երախտագիտութեամբ՝ ծունկ եմ խոնարհում ու մրմնջում. «Հանգիստ աճիւնիդ, անմոռաց ուսուցիչ»:

Խ. Կանայեանց

## ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԿՈՐՈՒՍՏ

Կարապետ եպիսկոպոսի մահվան բօթը եկաւ ցնցելու նրան ի մօտոյ ճանաչողներին:

Եւ ինչպէս կարելի էր չը ցնցվել ու խորապէս ցաւ չը զգալ, երբ հայ հոգեւորականութեան լուսաւոր աստղը, մտաւոր պատրաստութեամբ էն ամենէն պատկառելի եւ իր համոզմունքների մէջ էն ամենէն շիտակ դէմքն այլ եւս չը կայ:

Նրա պայծառ, բարեմասնութիւններով օժտված ֆիզիքականը կրում էր նոյնպիսի լայն սիրտ, որ զգայուն էր, տպաւորվող:

Վերջին տասնամեակի փոթորկալի կեանքն ու Էջմիածնի ոտնձգութիւններով լի տխուր իրականութիւնը շատ անգամ վշտացրին նրա հոգին իրանց անարդար ու մտացածին յերիւրանքներով, սակայն նա միշտ անյողդողդ, միշտ դէպի մեծը սաւառնած ակնածութեամբ՝ տարաւ իր վերցրած խաչի ծանրութիւնը: Քանի քանիները լքեցին այդ խաչը, հեռացան ընդ միշտ՝ առանց ետ նայելու, քանի որ, ինչպէս ասացինք, դժուար էր սովորական անհատի համար մնալ հերձուցիչ այդ մթնոլորտում:

Այո, Էջմիածինն ըստ արժանւոյն չը գնահատեց իր լաւագոյն զաւակի արժանիքները: Մինչ եւրոպական մտաւոր աշխարհն իր հիացքն էր արտայայտում ականաւոր եկեղեցականի պատրաստութեան եւ հրապարակի վրա դրված գրական մեծարժէք գործերի համար, Էջմիածինը զլանում էր ամենափոքր յարմարութիւն ընձեռել նրան՝ իր սիրած գրական-բանասիրական աշխատանքի մէջ խորասուզվելու:

Երկու տարի առաջ նրա մտերմական անձուկ վիճակը ծանր խորհրդածութեան մէջ ձգեց մի քանիսին: Հանգուցեալ Քալանթարի հոգեհանգստեան կարգը կատարելիս իր բնակարանում՝ ներկայ էր եւ Կարապետ եպիսկոպոսը: Հոգեհանգստից յետոյ, երբ ներկայ գտնվողները հեռանում էին, նա իր մօտ անձնաւորութիւններից մէկին յայտնում է, որ իջեւանած տեղը դառնալու համար՝ գրպանում կառքի փող անգամ չունի: Սա դառն իրողութիւն է՝ յատուկ մեր այլանդակ իրականութեանը միայն: Մի իրականութիւն, որի մէջ շիտակ, համոզմունքների տէր դէմքը ծաղկելու, փթթելու համար նպաստաւոր հող գտնել չեն կարող:

Կարապետ եպիսկոպոսն այն դէմքերից էր, որոնք իրանց հարազատ ծնող ժողովրդի կեանքն ալեկոծող արհաւիրքների հանդէպ՝ գիտեն մոռացութեան տալ այն ամենը, ինչ որ անձնական-անհատական է, եւ դուրս գալ [illegible] ոգով՝ զանգուածի անպատում վիշտը մեղմելու, խոր վէրքերին սպեղանի դնելու: Անցնում էր արհաւիրքը, եւ մտքի ու գիտութեան մշակը կրկին իր մենաւոր խուցը քաշված՝ ընկղմվում էր անցեալի մշուշապատ դարերից մեզ հասած անբարբառ յիշատակարանների մէջ եւ խօսել տալիս նրանց՝ փակ լեզուները բաց անելով: Կարապետ եպիսկոպոսի մահվամբ, ցաւ ի սիրտ, այդ քաղցրախօս լեզուները—նախնեաց յիշատակարանները— դարձեալ լռութեան կը դատապարտվեն երկար ժամանակ:

Իր գրական եւ հասարակական բեղմնաւոր գործունէութեամբ յայտնի մեծ եկեղեցականի ու եւրոպական իմաստով՝ գիտնական հոգեւորականի կորուստն անփոխարինելի է ընդհանրապէս, ներկայ ծանր, արհաւիրքներով աղետալի օրերին՝ մանաւանդ:

D—r

## ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Բագու, 20 նոյեմբերի

Այսօր, ժամը 12-ին, առաջնորդարանի դահլիճում կայացաւ առաջի հանդիսաւոր հոգեհանգիստը եւ մինչեւ թաղումը ամեն երեկոյ ժամը 7-ին նշանակված է հոգեհանգիստ. Էջմիածին Վեհափառին հեռագրված է, կազմակերպված է 14 հոգուց թաղման կարգադրիչ յանձնաժողով, որոշված է թաղումը այս կիրակի օր ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում:

Ժողովում, մի քանի պարոններ հարց բարձրացրին ժողովրդի մէջ տարածվող լուրերի մասին, որ սրբազանի մահը բըժշկական թիւրիմացութեան արդիւնք է եւ յանձնաժողովի անդամներին խնդրեցին այդ հարցը լուսաբանել ժողովրդի խղճին հանգստութիւն տալու: Ժողովին ներկայ էր նաւթարդիւնաբերողների խորհրդի անդամներից պ. Պարոնեանը. նա յայտնեց, որ այդ մասին քննութեան հարց է տրված յիշեալ բժշկի կողմից, որի հիւանդանոցում, ինչպէս գրած եմ, հանգուցեալ սրբազանը ենթարկվել է անդամահատութեան:

* *

### Կարապետ եպիսկոպոսի վերջին օրերը

Հանգուցեալ սրբազանին այցելեցի անդամահատութեան երկրորդ օրը. նրան շատ անհանգիստ դրութեան մէջ տեսայ. տաքութիւնը 39 աստիճանն անց էր. երկրորդ այցելութիւնս կիրակի օրն էր, երբ սրբազանին աւելի լաւ վիճակում տեսայ. հետաքրքրվում էր քաղաքական նորութիւններով եւ պառկած գիրք էր կարդում. իր համաձայնութեամբ տուի «Որեւ» թերթի այդ օրվայ համարը: Երբ ուրախութիւնս յայտնեցի սրբազանին, որ այդօր աւելի լաւ վիճակում եմ տեսնում իրան, նա յայտնեց, որ օպերացիայից հետ, թարախի ուռուց է գոյացել, որը անհանգստացնում եւ տանջում է: Հիւանդին հսկող բժիշկներից մէկին առանձին հարցրի այդ թարախի մասին. այդ բժիշկը հերքեց եւ ասաց, որ օպերացիայից գոյացել է ֆլէկմոն հիւանդութիւնը, որ սրտի հետ կապ ունի. եթէ երկրորդ օրը վիճակը աւելի թեթեւանայ, յոյս կայ, որ ճգնաժամը անցնի: Դժբաղդաբար այդ օրը երեկոյեան հիւանդութիւնը աւելի բարդանում է, հետեւեալ օրերում լինում բժըշկական խորհուրդ, ուր սրբազանի դրութիւնը գտնում են վտանգաւոր եւ անյոյս:

Ամսիս 18-ի երեկոյեան ժամը 8-ից սրբազանը կռւում էր մահվան դէմ. նա մինչեւ վերջին շունչը վստահ էր, որ կապրի. ժամը 11-ին զառանցանքի մէջ էր, անկապ արտասանութիւն, քարոզում էր, պահանջում ժամերգութիւնը չը խանգարել, խօսում էր աւելի սերունդների եւ հաշտեցնութեան մասին, աղօթքների կցկտուր մրմունջներ եւ այլն, միմիայն պարզ հասկանալի եղաւ, որ ինքը «երկար ճանապարհ պիտի գնայ», եւ քարոզի մտքով խօսքերի մէջ յիշեց՝ «Ռուսաց պետութիւնը հաստատ մնայ». այնուհետեւ լեզուն այլ եւս չէր գործում, շնչարգելութիւնը աւելի սաստկանում էր, հաղորդութիւնն ընդունեց անգիտակ դրութեան մէջ. 5 րոպէից յետոյ ընդմիշտ փակեց աչքերը:

Հանգուցեալին հիւանդանոցում շատ քիչ էին յաճախում նրա ծանօթները. թէեւ վերջին օրերին մի քանի քահանաներ այցելում էին, սակայն ցաւ իմ սրտի պիտի ասել, որ մեր փափկասուն հայերը լաւ գիտէին, որ սրբազանի րօպէները հաշւած են, սակայն մահվան ժամերին Բագուի քահանաներից ոչ ոք չը կար, բացի հաղորդութիւն տուող քահանայից, որին մահից մի ժամ առաջ Հ. Տէր-Միքայէլեանը հեռախօսով հրաւիրեց:

* *

Հանգուցեալ սրբազանը ունէր փորի վրա գրիժա հիւանդութիւնը. մօտ մէկ տարի առաջ նոյնպէս ենթարկվել էր Բագուի նոյն հիւանդանոցում անդամահատութեան:

Մի քանի անգամ եղել էր հանքային ջրերում, բայց անօգուտ: Սրբազանի բարի յատկութիւններից մէկն էլ այն էր, որ թէ Երեւանի, թէ Ատրպատականի, իսկ վերջին՝ Շամախու թեմի առաջնորդութեան ժամանակ սովորութիւն ունէր շրջել իր թեմի բոլոր գիւղերը, խօսում էր գիւղացու հետ, քարոզում էր դպրոցի, եկեղեցու մասին, որտեղ դպրոց չը կար յորդորում, համոզում, հոգաբարձուներ էր ընտրում, դըպրոցի գոյութեան համար աղբիւրներ էր որոնում, հարուստներից նպաստներ էր խընդրում: Շատ գիւղեր շրջելիս, ուր կառքի ճանապարհ չը կար, ձիով էր ճանապարհորդում, երբ եւ գրիժա հիւանդութիւնը շատ էր անհանգստացնում սրբազանին. այդ պատճառով իրան նորից ենթարկեց անդամահատութեան. չը նայած որ իրան մօտիկ հեղինակաւոր մասնագէտ մարդիկ զգուշացրել էին, որ թողնէ այդ մտադրութիւնը, սակայն սրբազանը ասել էր, թէ «խօսք է տուել» որ պիտի գնայ անդամահատութեան. «չեմ ուզում իմ խօսքը սուտ դուրս գայ»:

Հանգուցեալ Կարապետ եպիսկոպոսի թաղման համար ընտրված կարգադրիչ յանձնաժողովը ընդ նախագահութեամբ պ. պ. Հ. Տէր-Միքայէլեանի եւ փոխ-նախագահ Յ. Յովհաննիսեանի՝ 1) որոշեց հեռագրով վիշտ եւ ցաւակցութիւն յայտնել Վեհափառ Կաթողիկոսին, խնդրելով հանգուցեալի աճիւնը ամփոփել մայր եկեղեցու բակում. 2) թաղման ծախքը ծխականների հաշւին. 3) հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար բաց անել Շամախու թեմում ծխ. դպրոց կամ թէ եղած չքաւոր դպրոցներին դրամական նպաստ տալ. 4) մինչեւ թաղումը ամեն օր ցերեկ. ժամը 12-ից մինչեւ երեկ. ժամը 8-ը հերթապահներ նշանակել առաջնորդարանում քահանաներից եւ կարգադրիչ անդամներից. 5) թաղումը նշանակել կիրակի՝ ամսիս 22-ին:

* *

Կարգադրիչ յանձնաժողովը հետեւեալ բովանդակութեամբ հեռագիր ուղարկեց Էջմիածին Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

«Բագուի հայոց եկեղեցիների ծխականները հանգուցեալ Կարապետ սրբազանի մահվան առիթով կատարեցինք առաջին հոգեհանգիստ: Ընտրված թաղման կարգադրիչ յանձնաժողովս որդիական խորին վշտի անկեղծ ցաւակցութիւնն է յայտնում Ձերդ Վեհափառութեանը մեր արժանաւոր ճշմարիտ հովւապետի՝ թեմ. առաջնորդի մահվան առիթով, որը հանուր հասարակութեան ջերմ սէրն էր գրաւել իր պարտականութիւններին խորապէս նուիրված անխոնջ գործունէութեան համար ազգային լուսաւորութեան բարգաւաճման գործի մէջ, նրա մեծագործ ջանքերը ազգային մեծ աղէտների ենթարկված դժբաղդ զոհերին օգնելու գործում: Ծխական ժողովը վճռեց հանգուցեալի աճիւնը ամփոփել մայր եկեղեցու բակում կիրակի, նոյեմբերի 22-ին: Յայտնելով այս բոլորը ի գիտութիւն Ձերդ Վեհափառութեան, յանձնաժողովս խընդրում է օրհնել վերոյիշեալ կատարվելիք կարգադրութիւնը»:

Լիմ Տիմ

### Կարապետ եպիսկոպոսի կենսագրութիւնը

Կարապետ եպիսկոպոսը ծնվել է 1866 թւին, Ծղնա գիւղում (Հին-Նախիջեւանի գաւ.), ուր եւ ստացել է իր սկզբնական կրթութիւնը տեղական քահանայի մօտ, իսկ այնուհետեւ փոխադրվել է Ջաքաթալայի ծխական դպրոցը, այնտեղից էլ 1880 թւին Էջմիածնի հոգեւոր ճեմարանը, ուր եւ վերջացրեց իր միջնակարգ կրթութիւնը 1888 թւին: Մի տարուց յետոյ նա ընդունեց հոգեւոր կոչում եւ մեկնեց Եւրոպա աստուածաբանութիւն ուսանելու:

Գերմանիայում վերջացնելով աստուածաբանութեան դասընթացը, նա գնում է Ֆրանսիա եւ Անգլիա, ուր մանրամասն ծանօթանում է կաթօլիկ եւ անգլիական եկեղեցիների հետ եւ 1894 թ. վերադառնում է Էջմիածին եւ հոգեւորականի կոչում ընդունում: Էջմիածնում նա նշանակվում է Ճեմարանի տեսչի օգնական եւ աստուածաբանութեան ուսուցիչ: Այստեղ երկու տարի ծառայելով, նա նշանակվում է Երեւանի թեմի կառավարիչ:

Այնուհետեւ նա թողնում է Երեւանը եւ կրօնի դասատուի պաշտօն ստանձնում Բագու III գիմնազիայում, իսկ մի տարի յետոյ ընտրվում է Ատրպատականի թեմակալ, որպիսի պաշտօնում մնում է մինչեւ 1910 թիւը, ցոյց տալով եռանդուն եւ բեղմնաւոր գործունէութիւն պարսկահայերի կուլտուրական գործի մէջ:

1909 թ., Ատրպատականի թեմական ժողովի խնդրքով նա ձեռնադրվեց եպիսկոպոս Իզմիրլեան կաթողիկոսի ձեռքով:

1910 թ. նա ապրում էր Էջմիածնում եւ զբաղվում էր գիտական ու գրական գործերով մինչեւ անցեալ տարի, երբ նշանակվեց Շամախու թեմակալ, ուր եւս ցոյց էր տալի եռանդուն գործունէութիւն հասարակական եւ հոգեւոր ասպարէզում:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կարապետ եպ.-ի մահվան առիթով)

(Հեռագրով)

Էջմիածին, 20 նոյեմբ.

Խորապէս ցնցված ենք մեր թանգագին, անմոռանալի եւ վաստակաւոր գիտնական Կարապետ եպիսկոպոսի մահվամբ:

Նախկին աշակերտներ Սեւակ Տէր-Պօղոսեան, Յովսէփ Գրիգորեան, Յարութիւն Պետրոսեան, Երուանդ Հայրապետեան, Արտաւազդ Գրիգորեան:

(Հեռագրով)

Երեւան, 21 նոյեմբ.

Դառնապէս ողբում եմ Կարապետ եպիսկոպոսի, ազգային ինքնուրոյն եկեղեցու գաղափարի հաւատարիմ պաշտպանի վաղաժամ մահը:

Իգնատիոս ք. Տէր-Մովսիսեան

(Հեռագրով)

Մոսկվա, 22 նոյեմբեր

Ցնցված ենք Կարապետ եպիսկոպոսի անսպասելի դաժան մահվան լուրով. ողբում ենք կորուստը թանգագին ուսուցչի, ազնիւ մարդու, լաւ հայի, հայրենի ժողովրդի հոգեկան զարգացման անդաստանի բազմարդիւն մշակի եւ բազմաչարչար հայ եկեղեցու անձնուէր հովւի:

Արսէն քահանայ, Նիկ. Միրզաշիւր, բժ. Ասլարեան, երդ.-հաւ. Տէր-Մըկրտչեան, Յովհ. Թադէոսեան:

(Հեռագրով)

Ալէքսանդրօպօլ, 22 նոյեմբերի

Վշտագին ողբում եմ հազուագիւտ հոգեւորական Կարապետ եպիսկոպոսի կորուստը:

Բժ. Տէր-Յովսէփեան

Թիֆլիս, 20 նոյեմբ.

Խորապէս ողբում ենք մեր սիրելի ուսուցիչ Կարապետ եպիսկոպոսի անսպասելի մահը:

Ներսիսեան դպրոցի ուսուցիչներից նրա նախկին աշակերտներ՝ Խորէն քահ. Խուցեան, Արտաշէս Աբեղեան, Սիմակ, Եդիլեան, Ստ. Մելիքեան, Մատինեան, Արշակ Յարութիւնեան, Խոստիկեան, Տօնեան:

Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս՝ ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետի հետ միասին՝ շաբաթ առաւօտեան մեկնեց Բագու՝ Կարապետ եպիսկոպոսի թաղման հանդէսին ներկայ լինելու:

## ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 21-ին եւ 22-ին տեղի ունեցաւ Վրաց ժողովրդի մէջ Գրագիտութիւն Տարածող Թիֆլիսի Ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովը՝ Ընկերութեան 1914 թ. գործունէութեան հաշիւը քննելու:

Ընկերութեան գործունէութիւնը սկսվել է 1879 թ. մայիսի 15-ից, նպատակ ունենալով գիտութեան տարածումը ժողովրդի ստորին դասակարգի մէջ, հանրամատչելի գրքերի տարածելը եւ գրադարան-ընթերցարաններ հիմնելը: Անցեալ տարվայ մայիսի 15-ին լրացաւ Ընկերութեան գոյութեան 35-ամեակը, որի յօբելեանը թէեւ մտադրութիւն կայ արժանաւոր կերպով կատարելու, սակայն Ընկերութեան վարչութիւնը հաշւեգրքի մէջ նկատում է, որ ինքը, ի նկատի առնելով ներկայ պայմանները, անհնար է համարում պաշտօնապէս կատարել այդ յօբելեանը:

Իր գործունէութեան 35 տարվայ ընթացքում Ընկերութիւնը զանազան քաղաքներում եւ գիւղերում բացել է 21 դպրոցներ, որտեղ այդ ժամանակի ընթացքում կրթվել են 26,763 աշակերտներ: Դպրոցներին կից եւ այլ ուրեք մինչեւ 1914 թիւը բացված են 66 գրադարան-ընթերցարաններ, ունի մուզէում եւս, ուր պահվում են զանազան ձեռագիրներ եւ թանգագին հնութիւններ, որոնց թիւը հասնում է 11,393-ի. մուզէումի շինութեան համար 63,000 ր. Թիֆլիսում գնված է մի հողաբաժին 4800 քառ. սաժէն տարածութեամբ:

Մինչեւ 1913 թիւը հրատարակել է 108 զանազան գրքեր՝ ծախսելով հրատարակութեան վրա 186,537 ր.: Իսկ գրքերի վաճառումից օգուտ ստացել է մինչեւ 1912 թիւը 56,080 րուբլի:

Ընդհանուր եկամուտ Ընկ. ունեցել է 35 տարվայ ընթացքում 505,652 ր. 57 կ., իսկ ծախք 489,898 ր. 50 կ.:

Անդամավճար ստացված է 40,879 ր. 12 կ.: 1914 թ. յունվար 1-ին գումարների քանակը հասնում էր 123,437 ր. 94 կ.: Ներկայիս Ընկ. անշարժ եւ շարժական կայքերի արժէքը հասնում է 360,000 րուբլու:

Ընկերութիւնն ունի գաւառներում 31 բաժանմունք: Անդամների ընդհանուր թիւն է 3045, որից 472-ը Թիֆլիսում, իսկ մնացածը գաւառների բաժանմունքներում: Անդամավճարը սկզբներում եղել է 6 ր., սակայն 1907 թւից իջեցված է 3 րուբլու: Նկատված է, որ որքան իջնում է անդամավճարը, այնքան աւելանում է անդամների թիւը: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, վրաց ժողովրդի դեմօկրատ մասը տարիներից ի վեր ձգնում էր անդամավճարը իջեցնել մինչեւ մէկ րուբլու, բայց այդ բանը միշտ դիմադրութեան էր հանդիպում եւ ոչ մի կերպ չէր աջողվում նրանց:

Ընկ. վարչութեան ներկայ կազմը, սակայն, ընդ առաջ գնալով վրաց ժողովրդի արդարացի պահանջին, ինքը որոշել է իջեցնել անդամավճարը մէկ րուբլու, որպիսի որոշումը եւ յայտնեց ընդհանուր ժողովին, որը իր հերթին, երկու-երեք հոգու բացառութեամբ, տուեց իր հաւանութիւնը եւ միաձայն հաստատեց վարչութեան որոշումը:

Պէտք է նկատել, որ վրաց հասարակական բոլոր հիմնարկութիւններից ոչ մէկը չէ վայելում այնպիսի լայն ժողովրդականութիւն, ինչպէս Գրագիտութիւն Տարածող Ընկերութիւնը: Եւ այդ ժողովրդականութիւնը այժմ աւելի եւս կը բազմապատկվի շնորհիւ այն բանի, որ անդամավճարը իջեցնելով մինչեւ մէկ րուբլու՝ հնարաւորութիւն է տալիս վրաց ժողովրդի լայն մասսային մտնել Ընկերութեան մէջ եւ միացած ոյժերով առաջ տանել այն:

Վարչութեան փոխ-նախագահ Դ. Կարիճաշվիլին յայտնում է ժողովականներին, որ Ընկ. եւ վարչութեան նախագահ գեներալ Գ. Ղազբեգին յանձնարարել է յայտնել, որ նա իր ծերութեան եւ յոգնածութեան պատճառով հրաժարվում է այլ եւս պաշտօնավարելուց: Ժողովը, ի նկատի ունենալով նրա այդ պաշտօնում ցոյց տուած եռանդը եւ արդիւնաւոր գործունէութիւնը, միաձայն կերպով որոշեց պատգամաւորութիւն ուղարկել եւ խնդրել Գ. Ղազբեգին, որպէսզի նա ետ վերցնի իր հրաժարականը եւ շարունակէ վարել նախագահի պաշտօնը:

Ժողովի շարունակութիւնը լինելու է առաջիկայ կիրակի:

Բ. Մ.

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Դարձեալ փախստականները

Նոր-Բայազէտ, 7 նոյեմ.

Հոկտեմբերին տեղումս բացվեց Քաղաքների Միութեան հիւանդանոցը՝ 50 մահճակալով: Քաղ. վարչութիւնը իր սեփական շէնքը (8—10 սենեակներից բաղկացած) յատկացրել է այդ հիւանդանոցին, որ մեծ յարմարութիւն է ներկայացնում ամեն կողմից: Արդէն գաղթականների շրջաններից հիւանդներ են բերվել եւ խնամվում են երկու բժիշկների հսկողութեամբ: Կան նաեւ ֆելշերներ, գթութեան քոյրեր, սանիտարներ եւայլն: Հիւանդանոցի գլխաւոր կառավարիչն է տեղիս բժիշկ Մանուչարեանը, որը միեւնոյն ժամանակ կառավարում է նաեւ տեղական բարակը, որ հիմնված է սուր վարակիչ հիւանդութիւնների համար (տիֆ, խոլերա եւայլն): Նման սուր վարակիչ հիւանդներ չը կան, եւ աշնան սառը կլիման մեղմացրեց այդպիսի հիւանդութիւնները:

Այժմ հիւանդութիւններ սակաւ են՝ նոյնիսկ գաղթականների շրջանում, որոնց առողջապահական պայմանները այնքան էլ նպաստաւոր դրութեան մէջ չեն գտնվում:

Անցեալներում Երեւանի նահանգապետ Տիզենհաուզէնը եւ բժ. Անդրէասեանն այցելեցին մեր քաղաքը եւ դիտելով հիւանդանոցները՝ իրանց կարգադրութիւններն արին: Գաղթականների մեծ բազմութիւն էր խռնվել նահանգապետի մօտ՝ աղերսելով նրա օգնութիւնը, քանի որ նպաստները ուշանում են եւ իրանք սոված մնում: Սակայն նահանգապետը հանգստացնելով գաղթականներին՝ խոստացաւ շուտով հասցնել նրանց նպաստները: Ուստի մի քանի օր անց Երեւանից Խորէն եպ.-ի միջոցով տեղիս յաջորդ Ռուբէն վ. բերեց իր հետ նըպաստներ եւ բաժանեց գաղթականութեանը՝ քաղաքումս դրամով, շնչին 15 կ., իսկ գիւղերում՝ ալիւրով:

Տեղս եկաւ նաեւ Քաղաքների Միութեան լիազօր գեներալ Թամամշեան՝ փախստականների օգնութեան գործերը կարգաւորելու համար:

Որսորդ

### Մի համակրելի ձեռնարկ

Թէոդոսիա, 12 նոյեմբերի

Ներկայումս, շնորհիւ տիկ. Ցալիանէ Սպենդիարեանի, համարեա թէ Ղրիմի ամբողջ հայ գաղութների կանայք ոգեւորված ոտքի կանգնեցին եւ կազմակերպվեցին յօգուտ մեր թշուառ թիւրքահայ փախստականների: Տ. Սպենդիարեանը սրանից մի քանի օր առաջ եղել էր Սիմֆերոպօլ եւ ուրիշ գաղութներ եւ ամեն տեղ էլ կազմել էր կանանց կօմիտէներ, որոնց նպատակն է Թիֆլիսում պահել մի որբանոց յատկապէս Ղրիմի հայ կանանց անունով:

Այդ գեղեցիկ միտքով ոգեւորված՝ յարգելի տիկինը մի երկու օր առաջ խիստ կարճ ժամանակով եղաւ եւ մեր գաղութումս: Տիկնոջ հետ միացած էր այդ վայրւն գործը գլուխ բերելու համար նաեւ տ. Ր. Տարասեանը: Յիշեալ տիկինները այստեղ գալով տեղիս ծխ. դպրոցի դահլիճում մի երեկոյ կազմեցին մի ժողով, որին հրաւիրված էին տեղիս հայ գաղութի յայտնի կանայք: Այդ հաւաքոյթին տ. Սպենդիարեան զեկուցեց հայ փախստականների որբ ու անտէր մնացած երեխաների մասին: Նրա զեկուցումն այն աստիճան սրտառուչ էր ու յուզիչ, որ մօտ 20-ի չափ ունկնդրուհիներ եւ մի քանի ներկայ պարոններ չը կարողացան չոր աչքերով հեռանալ դահլիճից: Տիկինը բացատրեց նաեւ այդ որբանոցի մասին: Որբանոցը պիտի հիմնուի միմիայն ներկայ պատերազմի պատճառով վնասված ու գաղթած թիւրքահայ որբերի համար եւ առ այժմ ունենալու է 30 երեխայ եւ՝ ըստ նիւթական պայմանների՝ որբերի թիւը աստիճանաբար աւելացվելու է՝ հոգալով նրանց ոչ միայն առօրեայ ապրուստը, այլ եւ ապագայում ուսում ու կրթութիւն տալը եւ այլն:

Տիկնոջ առաջարկութիւնը ընդունվեց միաձայն, ինչպէս որ Սիմֆերոպօլ, Եւպատօրիա, Ջանկոյ եւ այլն: Նոյն երեկոյեան յիշեալ տիկինները մեկնեցին Ղրիմի միւս քաղաքները նոյն միտքով: Իսկ այսօր տեղիս կօմիտէի հրաւէրով կայացաւ գաղութիս հայ կանանց ընդհանուր ժողովը՝ այդ ազգօգուտ գործը լիակատար աջողեցնելու եւ առաջ տանելու համար, եւ կանանց նոր կօմիտէի անդամուհիներ ընտրվեցին գաղտնի քուէարկութեամբ՝ տիկնայք Աբրահամեան, Արութեան, Բալաբանեան, այրի երեցուհի Լ. Մանդալեան, Օրմանջեան, Նազարեան, օրիորդ Եղիազարեան, որոնք գաղութի հայ համայնքի կողմից ճանաչվելով մի պաշտօնական օրգան՝ պիտի շրջեն բոլոր հայ կանանց մէջ, առանց կըրօնի խտրութեան, եւ այդ նպատակի համար սահմանեն ամսավճար կոչվող կամաւոր տուրք:

Կ. ս. Աբգարեան

### Մի տարօրինակ վէճ

Գանձակ, 6 նոյեմբերի

Հոկտեմբերի 27-ին քաղ. վարչութեան մէջ քննվում էր մի լուրջ հարց. հայ ձայնաւորները յունիսի 23-ին դիմել էին վարչութեանը, թէ մի քանի ձայնաւորներ, ինչպէս բժիշկներ Ռաֆիբէկով, Աղայեվ եւ այլն, քաղ. վարչութեան մէջ պաշտօններ են վարում մեծ ռոճիկներով եւ որ այս բանը վերին աստիճան անյարմար է վարչութեան համար: Նահանգապետը հրամայել էր այս հարցը առաջիկայ նիստում քննել. Եւ ահա յունիսից դէպը անցնում են շատ նիստեր, եւ նոր է միայն նա քննութեան ենթարկվում: Ինչպէս որ տարօրինակ է այս բանը, նոյնպէս էլ տարօրինակ վէճ կայացրեց դուման այս հարցի առիթով: Հարցը քննութեան ենթարկվեց, ամբողջ 3 ժամ խօսեցին ձայնաւորները թէր եւ դէմ. երեւում էր, որ ձայները բաժանվում են երկու հակառակ բանակի՝ . . . . . . . . . . . . առաջինները գտնում էին, որ ձայնաւորները կարող են վարձու պաշտօններ վարել քաղ. վարչութեան մէջ, իսկ հակառակը պնդողները ապացուցանում էին այս հակառակ դիրքի անհարմարութիւնը հակառակ յունիսի 12-ի նիստում արտայայտած իրանց հայեացքներին, երբ քննվում էր նոյն հարցը քաղ. վարչութեան անդամ բժ. Հ. Ս. Մելքոնեանի

վերաբերեալ: Երբ հարցը արդէն պարզված էր համարվում եւ պէտք էր քուէարկութեան ենթարկել, մի . . . . ձայնաւոր առաջարկեց՝ «այս հարցի լուծումը հերթից հանել մինչեւ բարեպատեհ ժամանակ»... Եւ քաղ. վարչութիւնը . . . . . . . . . . .
. . . այդպէս էլ վճռեց...

Յովսէփ Խօջայեան

## ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նպաստամատոյց Ընկերութեան ներկայացուցիչ Գրիգոր Վարդանեանը հեռագրում է Արծափից նոյեմ. 22-ից.

Մուսունի և Արծափի շրջանը ձիւն է պատել. փախստականների ներկայացուցիչները պահանջում են անյապաղ շուտով տալ ամենաանհրաժեշտ կենսական պիտոյքները, ինչպէս և վառելիք, լուսաւորութիւն, տաք շորեր և վերմակներ: Խնդրում եմ շուտափոյթ օգնութիւն հասցնել:

## ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Ստացված են նուէրներ.

Դրամով՝

Հ. Շերմազանեան քահանայից 22 ր. 25 կ. ժողոված իր ձեռքով պ. Սիմէօն Ղազարեանի տանը ճաշկերոյթին: Գրիգորիուպոլից Հ. տէր-Յարութիւն ք. Տէր-Ենօքեանից 155 ր. 50 կ. ժողոված տեղական հայերից (Յ. Մ. Կարապետեանից 50 ր., Գ. Մաթոսեանից 25 ր. Յար. ք. Տէր-Ենօքեանից 12 ր., Մ. Կ. Կարապետեանից 10 ր., Յ. Ս. Դէմիրթաշեանից 5 ր., Յ. Գ. Դէմիրթաշեանից 5 ր., Կ. Ս. Յովհաննիսեանից, Կ. Պ. Սամուէլեանից, Մ. Պ. Լէմիկեանից Ս. Յ. Բենիից, Ս. Յ. Խորասանեանից, Գ. Խ. Յովսափեանից 3 ական ռուբլի, Մ. Կ. Տրդատեանից, Պ. Գ. Դէմիրթաշեանից, Գ. Ա. Երամիշեանից, Մ. Ա. Սամուէլեանից, Ա. Գ. Դէմիրթաշեանից, Կ. Գ. Քօլցայից 2-ական ռուբլի, Մ. Ե. Կարապետեանից, Յ. Մ. Դեսպոտեանից, Յ. Մ. Բարադանեանից, Կ. Ա. Սամուէլեանից, Հ. Տրդատեանից, Ե. Մ. Դեսպոտեանից, Ա. Կ. Կարապետեանից, Գ. Յ. Կարապետեանից, Յ. Խ. Յովսափեանից, Յ. Մ. Խաչիքեանից, Գ. Ա. Պօպօվեանից, Խ. Բ. Քեօվլիից, Մ. Գ. Զօլօտարեանից, Ն. Ղազարեանից, Հ. Գ. Դէմիրթաշեանից, Խ. Մ. Ստեփանեանից, Գր. Ս. Տիրացու Օհանեանից 1-ական ր., Գ. Գաբրիէլեանից, Յ. Խորասանեանից, Յ. Խատիսեանից 50 ական կոպէկ):

Տ. Նազարեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹԻՖԼԻՍ

◆ Բժիշկ Բաբալեան Վանից հեռագրում է Քաղ. Միութեան Կովկ. ճիւղի լիազօրին, որ այժմ Վանում կայ 1600 բնակիչ: Իսկ Վանի շրջանում գտնվում են 4000 փախստականներ, որոնք դիմում են դէպի Կովկաս: Վանում մեծ դժուարութեամբ է ճարվում հաց եւ միս: Միս տեսակի մթերքներ գալիս են Խոյից: Բժիշկը հեռագրի մէջ ասում է, որ աննպատակայարմար է հիւանդանոց բանալ Վանում, եւ իր կողմից առաջարկում է հաստատել բժշկական մի ընդունարան (пріемный покой) 120 մահճակալով. նա առաջարկում է նաեւ տնտեսական-սննդական կայաններ հաստատել Դօթուրում եւ Սարայում:

◆ Սանիտարական եւ փոխադրիչ մասի Գերագոյն Պետի ներկայացուցիչ գեն.-մայոր Բերնօվ առաջարկել է Քաղաքների Միութեան լիազօրին [illegible] ուղարկել բակտերիօլօգիական մի թռուցիկ խմբակ հակախօլերային պատուաստումներ անելու:

◆ Նոյն Բերնօվը առաջարկել է նոյն լիազօրին իրան ներկայացնել մինչեւ դեկտեմբերի 10-ը Քաղաքների Միութեան լազարէթներում գտնվող խեղանդամ զինուորների ցուցակը, որոնք կարիքի մէջ են:

◆ Սանիտարական եւ փոխադրիչ մասի Գերագոյն Պետի կարգադրութեամբ արգելված է թոյլ կուրծք ունեցող եւ թոքախտաւոր զինուորներին ուղարկել Կիսլօվօդսկ: Նրանք պէտք է ուղարկվեն Ղրիմ, Սօչի, Սուխում եւ Աբասթումանում:

◆ Երեկ Ջուլֆա ուղարկվեց 4 աւտոմոբիլ վիրաւոր եւ հիւանդ զինուորականներին տեղափոխելու համար:

◆ Քաղաքների Միութեան Կովկասեան ճիւղը ստացաւ մի միլիօն ռուբլի իր հիմնարկութիւնների պահպանութեան համար առաջիկայ դեկտեմբերի նախահաշուով:

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում Լեւոն Մանթաշեան փախստականների գործերով:

◆ «Գիւղատնտես» թերթը, որ դադարել էր սրանից մի տարի առաջ, մօտ օրերս լոյս կը տեսնի Հայոց Գիւղատնտեսական եւ Տնայնագործական Ընկ. հրատարակութեամբ:

◆ Վերջին օրերս քաղաքում այլեւս խօլերային դէպքեր չեն լինում: № 40 հիւանդանոցում, ուր գտնվում էր խօլերայով կասկածելի միայն մի հիւանդ, նա էլ առողջանալով դուրս եկաւ: Բայց խօլերային հակառակ հեղհեղէտ լայն չափեր է ընդունում սկարլատինան:

◆ Քաղաքների Միութեան Կովկասեան ճիւղի պատուէրով Հայոց Գիւղատնտեսական եւ Տնայնագործական Ընկերութիւնը պատրաստել է 1000 զոյգ դուլպայ փախստական որբերի համար:

◆ Այսօր Քաղաքների Միութեան տեղական ճիւղի հրաւէրով դումայի դահլիճում կը կայանայ ժողով Միութեան գլխաւոր լիազօր Չէլնօկօվի առաջարկի համաձայն, Թիֆլիսում հանգանակութիւն կազմակերպելու ռուս գերիների օգտին:

◆ Քաղաքների Միութեան Կովկասեան ճիւղի բժշկական մասը բժշկական կոմիտէ է հաստատում Գանձակի նահանգում, որը վերահսկելու է փախստականների սանիտարական դրութեան վրայ:

◆ Ստացանք 1) «Պատմական քաղուածքներ» Եղիշէ ա. ք. Գեղամեանի, գինն է 50 կ., Բագու, 1915 թ., 1106 1369 էջ եւ 2) «Գրիգոր Լուսաւորիչ» Գրիգոր ա. ք. Մանդակունու, էջ 116, գինն է 50 կ.:

### ԿՈՎԿԱՍ

◆ «День»-ի ասելով, Փոխարքայի նախկին օգնական սենատոր Պետերսոնը պաշտօն է ստանում Վլադիկավկազի երկաթուղում:

◆ «Թան. Ազրի» լրագրի ասելով, Սղնախում հացի գինը բարձրացել է 8—9 կ. ֆունտը եւ օրերով հաց չէ ճարվում նոյնիսկ այդ գնով: Չէ ճարվում նաւթ ու շաքար եւս, իսկ քաղ. վարչութիւնը ոչ մի միջոցի չէ ձեռնարկում այդ կարիքները լրացնելու նպատակով:

### ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Լուրերի համաձայն, Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը նշանակվում է Կիեւի միտրոպոլիտ:

◆ Պետրօգրադում սկսվել են աջակողմեանների խորհրդակցութիւնները Լէվաշօվի ղեկավարութեամբ: Պատուաւոր նախագահ է ընտրվել Վլադիմիր միտրոպոլիտը: Ներկայ են մօտ 100 ներկայացուցիչ: Ծրագիրն է՝ աջակողմեանների միութիւն, կռիւ առաջադէմ բլօկի, ապրուստի թանգութեան եւ գերմանական ազդեցութեան դէմ, մասնակցութիւն պատերազմից առաջ եկած աղէտները մեղմելու մէջ: Պետական Խորհրդի աջակողմեան խմբակը վճռել է մասնակցել խորհրդակցութիւններին միայն «ամեն ինչ պատերազմի ու յաղթութեան համար» դէվիզով:

◆ Մայրաքաղաքի թերթերի նոր տեղեկութիւններից երեւում է, որ Պետական Դուման գումարվելու է յունվարի 15-ին Գորեմըկինի ցանկութեան համաձայն:

◆ Մոսկվայում լոյս է տեսնում «Народная Газета» անունով մի նոր թերթ, որի նպատակն է ծանօթացնել ժողովրդական խաւերը կատարվող անցքերի նշանակութեան հետ բանուորութեան եւ գիւղացիութեան համար:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Նաւթլուղի դասաւորող հիւանդանոցի ծառայողները հանգուցեալ պատգամաւոր Լոմթաթիձէի գրուածքների ժողովածուն տպագրելու համար՝ որոշել են ֆոնդ հիմնել եւ այդ նպատակով իրանց միջեւ ժողովել են 54 ր. 50 կ. եւ այդպիսով հիմք դրել ֆոնդի: Դրանց օրինակին հետեւել են նաեւ Թիֆլիսի ապրանքատար կայարանի ծառայողները, Գորի քաղաքի հիւանդանոցի ծառայողները եւ Խաշուրի մի խումբ բանուորներ, որոնցից ամեն մէկը ուղարկելով իր շրջանում հաւաքած համեստ գումարներ, արձագանք է տալիս այդ համակրելի առաջարկի իրագործվելուն:

◆ Վրաց Հրատարակչական Ընկերութեան տպարանի բանուորները գործադուլ են յայտարարել տնտեսական հողի վրայ եւ անհա քանի օր է, որ տպարանում դադարած են աշխատանքները: Բանուորները, տիրող անտանելի թանգութեան պատճառով, ռոճիկների 10—40% աւելացումն են պահանջում, որին գլխաւոր կառավարիչ Ա. Ջաքարաձէն կտրուկ կերպով մերժել է, առաջարկելով գործադուլ անող բանուորներին ստանալ իրանց հասանելիք ռոճիկները, համարելով նրանց արձակված:

◆ Վրաց կուլտուրան սիրողների միութիւնը, որ դեռ անցեալ սեպտեմբերից անցել է վրաց գործիչների համար ամարանոց կառուցանելու գործի կազմակերպման, «Թան. Ազրի» ասելով, որպէս նուէր մինչեւ այժմ զանազան անձերից ստացել է 422 ր.:

◆ Համաձայն Վրաց Բարեգ. Ընկ. ստացած տեղեկութիւնների, հացի կարիքը այս տարի այնքան մեծ է, որ միայն Սամուրզաքանօյի հասարակութեանը կը հարկաւորվի 600,000 պուդ եգիպտացորեն, իսկ Մեգրելիայում մէկ միլիօն պուդից էլ աւելի:

◆ Վրաց Գիւղատնտ. Ընկերութեան ել եւ մուտքի այս տարվայ քանակը եղել է 30,529 ռուբլի, որից փորձա-ցուցադաշտեր կազմակերպելու եւ հողեր ձեռք բերելու գործին յատկացված է 15,500 ր., իսկ 9520 ր. ընկ. եւ մասնագէտների ծառայողների ռոճիկ:

◆ Անցեալ շաբաթ Սամտրեդիայում տեղի է ունեցել Քութայիսի նահանգում գոյութիւն ունեցող սպառողական 38 միութիւնների ներկայացուցիչներից կազմված համաժողովը, որի նպատակն այն էր, որ կազմվի կօօպերատիվ բիւրօ, որը կարողանայ կազմակերպված կերպով կռիւ մղել գաւառական ժողովրդի մէջ տիրող անտանելի թանգութեան դէմ եւ մատչելի գներով մթերք մատակարարել այդ ժողովրդին: Ժողովը ընտրել է կազմակերպիչ բիւրօ, որի պարտականութիւնն է կօօպերատիվ միութիւնների համար ապրանք գնել:

ՀԻՒԾՎԱԾՈՒԹԻՒՆՆ ու նիհարութիւնը, եթէ առաջացած է թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրօնիկական հիւանդութիւններից, նէվրաստենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ:

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրայ և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր:

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը:

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք:

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья Петроградъ
Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան

№ 4 0—9

## [illegible]

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

### Օպերա

Աւելի քան աջող ընտրութիւն իր բենեֆիսի առիթով օպէրային խմբի շնորհալի արտիստ Մ. Շվէցը չէր կարող անել նոյեմբերի 21-ին: Բօրօդինի «Իշխան Իգօրի» մէջ Կօնչակի եւ իշխան Վլադիմիրի, մանաւանդ առաջինի դերը նա կատարում է անմնան:

Թատրոնը ծայրէ ի ծայր լցրած հասարակութիւնը բենեֆիցիանտին մատուցեց բազմաթիւ ծաղկեայ փնջեր եւ մի քանի արժէքաւոր ընծաներ, իսկ ծափահարութիւններին ու ովացիաներին վերջ չը կար:

«Իշխան Իգօրի» ներկայացումը, որ ամբողջովին ռուսական [illegible] է պարունակում իր մէջ եւ այդ պատճառով աւելի մօտ է ռուս արտիստ-արտիստուհիների սրտին ու հոգուն, շնորհիւ աջող անսամբլի անցաւ սահուն, տպաւորիչ այդ երեկոյ:

Տիկ. Բրաունի ձայնը իշխանուհու դերում հնչում էր յստակ, իսկ դրամատիկ տեղերում նա ցոյց տուեց իր ձիրքը:

Ջալիպսկին Իգօրի որդու փոքրիկ դերը տարաւ իրան յատուկ ոգեւորութեամբ:

Ամեն անգամ, երբ հանդէս է գալիս Պօլեաեվը, մենք միշտ էլ լաւատես ենք, որ նա իր ստանձնած դերը տանելու է աջող, ամբողջացրած, այնքան նա փորձված եւ շնորհալի դերասան է: Հաճոյքով լսվում է նա, որի թաւիչ ձայնը շնորհալի խաղի հետ նրան դնում է ներկայ խմբի առաջնակարգ ույժերի առաջին շարքում: Իգօրի դերը նա կատարեց հարազատ գծերով:

Վատ չէր Ռըբչինսկայան Իվան Կօնչակի աղջկայ դերում:

Չենք կարող չը յիշել երրորդ գործողութեան մէջ Իվանի [illegible] արեւելեան երգի մասին, որ երգեց հայուհի Մ—եան:

Այդ օրվայ ներկայացման աջողութեան մեծ մասն ընկաւ օրկեստրի վրայ, որի ղեկավարն էր տաղանդաւոր Պազօվսկին: Յանձին նրա՝ օպէրային խումբն ունի անպայման կարող դիրիժոր: Սկզբից մինչեւ վերջ նա աջողութեամբ տարաւ իր պատասխանատու պաշտօնը եւ դրա շնորհիւ թէ առանձին դերակատարների եւ թէ խմբի երգն անցաւ համաչափ:

Լաւ էր նաեւ բալէտը:

Յիշենք նաեւ Դէմիդենկօյին եւ Ելենինին, որոնք իրանց ծաղրածու դերերում բաւական զուարճութիւն պատճառեցին հասարակութեան:

Ռեցէնզէնտ

Ամբողջ սրտից պէտք է շնորհակալ լինել Նելասօվին, որ կիրակի օրերով կազմակերպելով ցերեկվայ օպէրային ներկայացումներ անսահման մեծ հաճոյք է պատճառում մեր աղքատ սերնդին:

Պէտք էր տեսնել՝ օրինակ՝ կիրակի, նոյեմ. 22-ի ցերեկը թէ ինչ կենդանութիւն էր տիրում Արքունական թատրոնում լի երեխաների թագաւորութեան մէջ: Ինչպիսի ուրախութիւն, զուտ երեխայական անպաճոյճ հրճուանք...

Պիէսների ընտրութիւնն ըստ ամենայնի աջող էր. 1) «Եօթ այծիկները», 2) «Մալօրոսական հարսանիք» եւ 3) «Կարմիր գլխարկ». դրանց բովանդակութիւնը յայտնի է ամեն մի երեխայի:

Մեծ զուարճութիւն պատճառեցին իրանց կոմիքական խաղով տ. Պլատօնօվան եւ պ. Դէմեանենկօն:

Այս վշտալի օրերում թող գոնէ երաժշտութիւնը մեզ էլ հաղորդակից անէ մեր երեխաների անմեղ ուրախութեանը:

Ռեցէնզէնտ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 նոյեմբերի

Հրի ու սրի ճանկերից մազապուր պրծած դժբաղդ հայրենակիցներիս՝ երեք որբի կրթութեան եւ դաստիարակութեան պիտոյքների հոգսը յանձն առաւ ձրիաբար կատարել պ. Օրբէլեանը:

Որբերը ներկայումս սովորում են պ. Օրբէլեանի պանսիօնում: Այս համեստ օգնութեան համար գալիս եմ ի լուր հայ հասարակութեան յայտնելու երախտագիտական բուռն զգացմունքներս դպրոցական գործում բազմաշխատ պ. Օրբէլեանին:

Ղ. Դ.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Վանի Օշկա գիւղացի Սարգիս եւ Մաթոսիկ Մարտիկեանների ընտանիքների ու երեխաների, նոյնպէս եւ նոյն գիւղացի Մելքոնի՝ Կարապետի տղայ Մկրտչի եւ սրա ընտանիքի ու երեխաների մասին տեղեկութիւն են խնդրում Եգիպտոսում ապրող նրանց հարազատները: Յիշեալների ուր գտնվելու մասին տեղեկութիւն ունեցողները թող նեղութիւն կրեն յայտնել հետեւեալ հասցէով. Բաթում, Շիպելեվսկայա փող. № 24, Խաչատուր Մկրտչեանցին:

847. 1—1

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Դուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան եւ վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՍԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային եւ երեխայոց հիւանդութ. եւ ծննդկանաց:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի եւ քթի հիւանդութ.
Ա. Պ. ԿԱՐԼԳԵՅԵԱՆ— 12—1 ժ. ներքի., հիւնդ. եւ ջղ. բաթ. երեխայոց ներքին եւ հիւ. եւ ծաղկահատ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ 2—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիում) եւ օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—204

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿ. ՓԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ՝ սրսկումներ, մաքուր ձեռքով եւ էլեկտրականութեամբ հիմնաւոր բժշկութիւն սուր եւ խրօնիկական տրիպէրի, փափուկ ու կոշտ շանկրի, սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն դեղերով բժշկական-առողջապահական խորհուրդներ: Եկող օտար քաղաքացի հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ ճանաչված բժիշկների մօտ եւ ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կազմակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն): Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ եւ բժշկադեղեր 3 ռուբլի վճարով: Գաղթականներին ու չքաւորներին խորհուրդը ձրի՝ ինձ մօտ: Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը: Հասցէ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ.

Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վեներական ախտերի բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով ու ռեցեպտներով, գ. 1 ռուբ. 2) «Փորձառական բժշկարան», անհրաժեշտ ամեն մի ընտանիքի, գ. 50 կ., 3) [illegible] անէկդօտներ՝ գ. 20 կ., 4) [illegible], ծիծաղաշարժ վօդըվիլ, գ. 2 կ., 5) «Բաժին», գ. 10 կ. եւ նամակադրոշմ ծախս 20 կոպէկ:

(Տ. Կ.) 311. 100—57

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.

1) ՋՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր.
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Ա. Սափաբեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . . . . — 30 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 30 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՈՆՈՂ ՈԳԻՆ վէպ Յ. Սօլօվեանի . . . . . . . — 40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ: Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միայն 15%:

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРОЙ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ
И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ
ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ

30—10 762. (Ի. Կ.)

Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Линчъ—Арменія շեղ հր. 2 հատ. գ. 18 ր.
1906 եւ 1909 թ.թ. Գեղունի, շեղ հրատ. իւրաքանչիւրի գինն է 3 ր.
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ 1 ր.
» Մատնիչ, պատմուածք 40 կ.
Շիրվանզադէ—Ցաւագարը եւ չնուրի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ եւ պատկերով). 50 կ.
» Ժողովածու երկերի I, II, III, եւ IV հատոր ամեն մինի գինն է 1 ր. 50 կ.
М. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ армянъ 40 к.
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи 40 к.
Ив. Саркисянъ—Армянск. литература 60 к.
Վարդան [illegible]—Հառաչանք (երկրորդ տպագրութիւն) 30 կ.
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա քաղաքական յարաբերութիւնները 25 կ.
Նապօլէոնական պատկերներ [illegible] 50 կ.
Գր. ա. ք. Մանդակունի—Հանրամատչելի բժշկարան ([illegible]) 1 ր. 20 կ.
Ս. Դանիէլ Բէկ—Կանանց հարցը
Ա. Քրիմեան—Վարդավառ, վէպ 20 կ.
2 արտատպած. 10 կ.
[illegible]—[illegible] 3 կ.
Ա. Աթայեան—Սիրոյ նովիտը
Յիշեալ բոլոր հրատարակութիւններից գրավաճառներին պահանջողներին կը լինի զեղչ 25%
Մինչեւ 1 ռուբլի գումարի գրքերի առաքման ծախսը Ընկ. վրայ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ» (Соломоновская, 21).

(Օ. Մ.) 244. 15—9

НОВОЕ ИЗОБРѢТЕНІЕ ВЪ АМЕРИКѢ.

Въ столицѣ новаго міра Нью-Іоркѣ М. Деламуремъ изобрѣтено самое радикальное средство „Рапидъ" для полнаго излеченія остраго и хроническаго Триппера (Гонорреи).

Въ настоящее время въ лучшихъ клиникахъ и санаторіяхъ цивилизованныхъ странъ Америки и Европы для излеченія Триппера (Гонорреи) какъ остраго такъ и самаго застарѣлаго хроническаго, извѣстные врачи, профессора и спеціалисты примѣняютъ составъ „Рапидъ" изобрѣтенный М. Деламуремъ. „Рапидъ" разрѣшенъ Россійскимъ Главнымъ Медицинскимъ Управленіемъ за № 1295.

Курсъ леченія при самыхъ застарѣлыхъ случаяхъ три недѣли, два двойныхъ флакона и коробка пилюль. Прилагается способъ употребленія на всѣхъ мѣстныхъ языкахъ. Каждый больной можетъ у себя дома лечиться безъ посторонней помощи, въ тайнѣ. Цѣна за одинъ флаконъ 5 руб. полный курсъ леченія 2 двойныхъ флакона и коробка пилюль 9 руб. въ провинцію меньше двухъ флаконовъ не высылается. Налож. плат. высылается только по полученіи задатка 3 руб.

Избѣгайте недоброкачественныхъ и вредныхъ для здоровья подделокъ и подражаній.

Исключительный складъ для всего Кавказа, въ Кавказскомъ отдѣленіи Московской Лабораторіи М. Деламуре, Тифлисъ, Эриванская площадь Пушкинская 3, д. Кредитнаго О-ва верхній этажъ.

Всѣмъ лазаретамъ, госпиталямъ аптекамъ и аптекарскимъ складамъ отпускается со скидкой, не менѣе 5 коробокъ.

(Ի.) 50—11

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.